Ուրախ հեքիաթներ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)
Ու 891

Ուրախ հեքիաթներ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 80 էջ:
Ու 891

Հեքիաթների այս ժողովածուում ներառված են ուրախ պատմություններ տարբեր ժողովուրդների ու հայկական հեքիաթների գանձարանից: Այս հեքիաթները նույնպես ունեն խրատական և ուսուցողական բնույթ, որը, սակայն մատուցվում է փոքր-ինչ այլ՝ ուրախ երանգներով:

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-9939-75-506-9
© Էդիթ Պրինտ, 2020

Ադոն ու Բդոն

Մի մարդ ու կին են լինում, կնոջ անունը Բդո է լինում, մարդու անունը՝ Ադո: Սրանք մի աղջիկ են ունենում: Աղջիկը մեծանում է, ամուսնանալու ժամանակը գալիս է: Կինն ասում է.

– Ադո՛:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Արի խելք թափենք:

– Թափենք, թափենք:

– Գնանք մի բան բերենք մեր աղջկան մարդու տալու համար:

Գնում են, մի քիչ սև բուրդ են բերում, տալիս աղջկան, ասում.

– Էս տար լվա՛, թո՛ղ սպիտակի:

Ադոն ու Բդոն խելքից թեթև էին, աղջիկը՝ խելացի, բայց նրանցից ազատվելու ճար չուներ: Աղջիկը բուրդը տանում է գետը, կամրջի տակ սկսում լվանալ: Լուսաբացին գնում է, իրիկունը գալիս. լվանում, լվանում է, բայց բուրդը սև է մնում: Տասն օր տանում, բերում է, բուրդը չի սպիտակում, ու վերջ:

Մի վաճառականի որդի ամեն օր էդ կամրջով գնում ու գալիս է: Տեսնում է աղջկա չարչարանքը, խղճում է նրան ու մտածում. «Ես էս աղջկան պիտի էս չարչարանքից ազատեմ»: Մի օր կանգնում է կամրջի վրա ու աղջկան հարցնում.

– Էդ ինչ ես անում. ամեն օր բուրդ ես լվանում, պատճառն ինչ է, ասա՛ ինձ:

Աղջիկն ասում է.

– Ես էլ չգիտեմ, թե ինչ եմ անում: Իմ մերը՝ ծուռ, իմ հերը՝ ծուռ. սև բուրդը տվել են, թե՝ տար լվա՛, թո՛ղ սպիտակի: Ես էլ գլուխս ազատելու համար բերել, լվանում եմ:

Տղան ասում է.

– Ա՛յ աղջիկ, արի՛ նստիր ձիս, ես քեզ ազատեմ էդ ծռերից:

Տղան աղջկան տանում է իրենց տուն:

Դառնանք Ադոյին ու Բդոյին:

Երեկոյան աղջիկը տուն չի գալիս: Այսուայնտեղ հարցնում են, իմանում, որ մի վաճառականի որդի տարել է նրան, դարձրել է իր կինը: Բդոն ասում է.

– Ադո՛, ա՛յ տղա, արի խելք թափենք:

– Թափե՛նք, թափե՛նք:

– Մի բան վերցնենք, գնանք մեր աղջկան տեսնենք:

Գնում են, մի քիչ թեփ հավաքում, բերում տաշտի մեջ շաղախում, թոնրի սառը կողին զարկում, երեք-չորս օր սպասում, մինչև եփվի: Բլիթը թոնրի մեջ չորանում է, իրենց կարծիքով՝ եփվում: Հանում են թոնրից, լցնում խուրջինը, շալակում ու գնում, հասնում աղջկա տուն: Աղջկան լուր են բերում, թե՝ քո հերն ու մերն են եկել:

Աղջիկը շտապ վազում է նրանց ընդառաջ, բացում խուրջինը. գիտեր՝ հերն ու մերը ծուռ են: Հոր ու մոր բերածները թափում է գետը, իրենց այգու պտուղներից լցնում մեջը, ինքը հետ դառնում տուն: Սկեսուրը հարցնում է.

– Քո հերն ու մերն ինչ են բերել:

– Մեր այգու պտուղներից են բերել, ուրիշ ինչ պիտի բերեին:

Երեկոյան աղջիկը հորն ու մորը տանում է սենյակ, որ քնեն: Երբ ճրագը վառում են, Ադոն ու Բդոն տեսնում են, որ էդ սենյակում ամեն տեղ չամիչ է փռած:

– Ադո՛,– ասում է կինը:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Ադո՛, արի խելք թափենք:

– Թափենք, թափենք:

– Էս սև բլոճներն ինչի՞ են էստեղ լցրած: Սրանք մեր աղջկա գլխին պատիժ կդառնան. մեր աղջիկը պիտի թափի: Ադո՛, արի էս սև բլոճները թափենք դուրս:

Մինչև լույսը կբացվեր, ինչքան չամիչ կար, թափում են դուրս:

Լուսաբացին աղջիկը գալիս, տեսնում է, որ սենյակում մի հատիկ չամիչ չի մնացել: Հորն ու մորը սենյակից հանում է, դուռը փակում:

Ադոն ու Բդոն էդ օրն էլ են մնում: Դարձյալ երեկոն գալիս է, աղջիկը հորն ու մորը տանում է քնելու:

Ադոն ու Բդոն ճրագը վառում են, տեսնում՝ ի՞նչ. քաղցրավենիքի քսան ման: Բացում են ամանները. մեջները ինչ-որ քաղցր բաներ են, բայց իրենք չգիտեն, որ ուտելիք են:

– Ադո՛:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Արի խելք թափենք:

– Թափենք, թափենք:

– Էս սև բաներն արի դուրս թափենք:

Մինչև լույսը կբացվեր, ինչ որ կար, թափում են դուրս, մաքրում, ավլում, նստում:

Լուսաբացին աղջիկը գալիս է, տեսնում, որ սենյակում բան չի մնացել. ինչքան քաղցրավենիք կար, թափել են: Աղջիկը հորն ու մորը դուրս է հանում սենյակից, դուռը փակում, բայց շատ է զայրանում նրանց վրա:

Էդ օրն էլ է անցնում: Երեկոյան աղջիկը հորն ու մորը տանում է սագերի մոտ քնեցնելու: Էդտեղ հարյուր սագ է լինում: Դե, թռչուն են, կտուցով քորում են իրենց փետուրները: Ադոն ու Բդոն տեսնում են, որ սագերը քորում են իրենք իրենց, մտածում են, որ ոջիլ կա վրաները:

– Ադո՛:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Արի խելք թափենք:

– Թափե՛նք, թափե՛նք:

– Արի մի պղինձ ուզենք, մի քիչ էլ փետ, վառենք, ջուր տաքացնենք, ասենք՝ մեր ոտքերը լվանալու համար ենք ջուրը տաքացնում, որ մեր աղջիկը գլխի չընկնի, թե ինչ ենք անելու: Բերենք, էս սագերի գլուխները լվանանք:

Պղնձե մի կաթսա են ուզում, փայտ ու ջուր, օջախ են վառում, ջուրը եռացնում, սագերի ոտք ու գլխից բռնում, գլուխները մեկ-մեկ մտցնում եռման ջրի մեջ, հանում, սագերին շարում թառի վրա: Հարյուր սագն էլ լվանում են, բոլորին սատկացնում:

– Ադո՛:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Տեսար՝ ո՞նց խելք թափեցինք. սագերը հանգստացան, քնեցին:

Լույսը բացվում է: Աղջիկը գալիս, տեսնում է, որ մի հատիկ ողջ սագ չի մնացել: Մի ոսկի է տալիս հորն ու մորը, դուռը բացում ու դուրս անում նրանց:

Ադոն ու Բդոն ճամփա են ընկնում: Շատ են գնում թե քիչ՝ մի հովվի են հանդիպում: Ադոն ասում է.

– Հովի՛վ, արի՝ բան եմ ասում: Էս փողը վերցրո՛ւ, մեզ համար մի էնպիսի՛ ոչխար բեր, որ պնչից մեղր թափվի:

Հովիվը ոսկին տեսնում է, ուրախությունից քիչ է մնում խելքը թռցնի: Գնում, հոտի միջի ամենալավ ոչխարը բերում է: Ադոն ու Բդոն չեն հավանում:

– Հովի՛վ, սրանից լա՛վ ոչխար բեր:

– Սրանից լավը չունեմ: Գնացե՛ք, ձեր ուզածն ընտրե՛ք:

Ադոն ու Բդոն գնում, հոտի միջից էնպիսի մի ոչխար են ընտրում, որ գրոշ չարժեր. քթից ու բերանից լորձ էր թափվում:

Հովիվը շատ է ուրախանում, որ հենց էդ ոչխարն ընտրեցին:

Ադոն ու Բդոն ոչխարը վերցնում, տանում են տուն, թոնիրը վառում են, հարիսա եփում:

– Ադո՛:

– Ի՞նչ է, Բդո՛:

– Արի խելք թափենք:

– Թափե՛նք, թափե՛նք:

– Գնանք, ատամ մաքրելու չոփ բերենք, որ հարիսեն ուտենք:

Իրենց ունեցած փողը կապում են մի թաշկինակի մեջ, դնում տան մոտի սյան գլխին, թոնիրը ծածկում են, որ հարիսան չսառչի: Դուռը փակում են, բանալին դնում պատի ճեղքի մեջ, իրենք գնում պուրակից չոփ բերելու:

Ճանապարհին մի մարդ է հանդիպում նրանց: Ադոն ասում է.

– Ա՛յ մարդ, չլինեմ, չիմանամ, որ գնաս մեր տուն. հարիսեն թոնրի մեջ է, փողը կապած, դրած է սյան վրա, բանալին էլ պատի ճեղքում է: Թե գնաս վերցնես, սևդ կտամ:

Ասում է, ու ճանապարհը շարունակում են:

Տեսնենք, թե ինչ է անում էդ մարդը: «Կարող է խելառ են սրանք: Պիտի գնամ տեսնեմ. մեկ էլ տեսար՝ ճիշտ են ասել»:

Գնում, պատի ճեղքից բանալին հանում է, դուռը բացում, մտնում ներս, թոնիրը բացում է, հարիսան կուշտ ուտում: Սյան գլխին էլ նայում է, փողը գտնում: Փողը վերցնում է, թաշկինակի մեջ մի կտոր թրիք դնում, նորից կապում, դնում սյան գլխին: Հետո դուռը փակում է, բանալին դնում տեղն ու գնում:

Դառնանք Ադոյին ու Բդոյին: Գնում են, մի-մի հսկա ճյուղ առնում, հետ գալիս, տեսնում՝ բանալին տեղում է:

– Ադ՛ն:

– Ի՞նչ է, Բդո՛ն:

– Տեսա՞ր՝ ո՞նց խելք թափեցինք. էն մարդուն որ չվախեցնեի, թե՝ սևդ կտամ, հիմա եկել էր, մտել մեր տուն, հարիսեն կերել, փողն էլ տարել:

Դուռը բացում են, մտնում ներս, տեսնում՝ թոնրի բերանը բաց է, ճանճերն էլ լցվել են հարիսայի դատարկ կաթսայի մեջ: Վազում են փողի կողմը: Թաշկինակը վերցնում են՝ փափուկ է: Կապը քանդում են, թրիքը տեսնում, մնում զարմացած.

– Էդ ո՞վ է, որ սյունով բարձրացել, հասել է գլխին ու հենց էնտեղ էլ կեղտոտել:

– Ադ՛ն:

– Ի՞նչ է, Բդո՛ն:

– Խելք թափենք:

– Թափե՞նք, թափե՞նք:

– Մեր հարիսեն, կա-չկա, էս ճանճերն են կերել:

Հենց էդ պահին մի ճանճ նստում է Բդոյի ճակատին:

– Բդո՛ն:

– Ի՞նչ է, Ադ՛ն:

– Ճակատդ պի՛նդ պահիր,– ասում է Ադոն ու ձեռքի դագանակով տուր թե կտաս՝ Բդոյի ճակատին:

Բդոյի ճակատից արյունն սկսում է թափվել: Մինչև դեսուդեն են ընկնում, վերքը կապում, արյունը կտրում, հարիսան էլ են մոռանում, փողն էլ:

Երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ Ադոյին, մեկը՝ Բդոյին, մեկն էլ նրան, ով Ադոյի ու Բդոյի մասին պատմեց:

Գիտե՞մ, գիտե՞մ

Թանգիկ անունով մի նորահարս է լինում: Մի օր ամուսինն ասում է.

– Տոլմա եփել գիտե՞ս:

– Գիտեմ,– ասում է Թանգիկը:

– Դե էսօր մի լավ տոլմա եփիր, ուտենք,– ասում է ամուսինը ու գնում հանդը:

Թանգիկը գնում է հարևանուհու մոտ, որ իրեն տոլմա եփել սովորեցնի: Հարցնում է.

– Տոլման ո՞նց են եփում:

Հարևանուհին ասում է.

– Գնա՛, միսը ծեծի՛ր:

– Գիտեմ,– ասում է Թանգիկը:

– Գնա՛, բրինձը մեջը լցրո՛ւ,– ասում է հարևանուհին:

– Գիտեմ:

– Աղ, պղպեղ լցրու մեջը, սոխը, սամիթը, ծիթրոնը, ռեհանը ավելացրո՛ւ, խառնի՛ր:

– Գիտեմ,– ասում է Թանգիկը:

– Խաղողի տերևի մեջ փաթաթի՛ր, դի՛ր կաթսայի մեջ… – ասում է հարևանուհին:

– Գիտեմ:

– Դե՛ որ գիտես, էդպես էլ արա՛, էլի՛, ինչի՞ ես եկել, գլուխս տանում:

– Բայց մի բան էլ պիտի լինի, ինչի՞ չես ասում, է՞:

Հարևանուհին տեսնում է, որ սրա վերնահարկը դատարկ է[1], ասում է.

– Գնա՛, մի կտոր էլ աթար[2] դի՛ր վրան, եփի՛ր:

– Էդ էլ գիտեմ,– ասում է Թանգիկը:

Գնում է, մի մեծ կտոր աթար է դնում տոլմայի վրա, եփում: Երբ մի քիչ անցնում է, զզվելի հոտն ընկնում է բակն ու տունը: Ամուսինը գալիս է հանդից, Թանգիկը տոլման բերում է, որ դնի սեղանին, թրիքի հոտն աշխարհ է բռնում: Ամուսինը զայրանում է կնոջ վրա: Կինն ուզում է արդարանալ:

– Ա՛յ մարդ, հարևանս է սովորեցրել, ես ի՞նչ մեղք ունեմ:

Ամուսինը դուրս է գալիս հարևանի հետ կռվելու: Հարևանուհին, ինչպես եղել էր, ամեն ինչ պատմում է.

– Կինդ հիմար է, պահում ես, որ ի՞նչ: Թե տոլմա եփելը գիտի՝ էլ ինչի՞ է եկել, մեր զահլան տանում:

«Գիտեմ, գիտեմ». էդ է իմանալը:

---

[1] Խելքից թեթև է

[2] Չոր թրիք

Ճարտասանության հեղեղը

Եղել է սա, թե՞ չի եղել, բայց Խորեզմում ինչ-որ ժամանակ ապրել է մի հռչակավոր հեքիաթասան՝ Սեյֆուտդին անունով, որին կոչել են ճարտասան, նրա համբավը հորդառատ գետի նման հոսել է երկրից երկիր, և բազմաթիվ մարդիկ են եկել հեռուներից Խորեզմ, որպեսզի վայելեն նրա զրույցների քաղցրությունը և ըմպեն նրա ճարտասանության աղբյուրից:

Եվ ահա հեքիաթասանի համբավը հասնում է Բուխարայի մի հարուստ վաճառականի: Նա սովոր չի լինում իրեն որևէ բանում զրկելու և, իհարկե, ցանկանում է լսել նաև հռչակավոր Սեյֆուտդինին: Բայց նրա գործերը հնարավորություն չեն տալիս թողնել ամեն ինչ և գնալ հեռավոր Խորեզմ: Եվ վաճառականը որոշում է իր մոտ հրավիրել այդ ճարտասանության հռչակավոր վարպետին: Նա ճոխ նվերներ է դնում արծաթե մատուցարանի վրա, նաև քսակով դրամ և գնում է քարվանսարա: Այստեղ նա

գլուխ է տալիս քարվան-բաշիին, որը ուղտերի քարավանով ուղևորվում էր Խորեզմ և ասում.

- Եթե դու ինձ մոտ բերես ճարտասան Սեյֆուտդինին, ապա այս նվերները և քսակը քոնը կլինեն:

Քսակը ծանր էր, նվերներին էլ գին չկա՛ր, և քարվանբաշին համաձայնում է: Դեռ երկրորդ անգամ լուսինը չդարձած, նա Բուխարա է հասցնում հռչակավոր Սեյֆուտդինին: Վաճառականը հյուրին ընդունում է մեծագույն հարգանքով: Նա բազմաթիվ նվերներ է տալիս նրան, և երեկոյան, երբ հյուրը հանգստանում է հեռավոր ճանապարհից հետո, կանչում է իր հարազատներին, ընկերներին և հարևաններին, հեքիաթասանին նստեցնում է Բեքեյի թանկագին գորգի վրա և խնդրում է նրան՝ ուրախացնել բոլորին իր ճարտասանության ծաղիկներով և սրամտության ադամանդներով:

Տանը մի այնպիսի լռություն է տիրում, որ լսվում է անգամ սարդոստայնի մեջ խճճված մոծակի բզզոցը: Սեյֆուտդին ճարտասանը սկսում է իր առաջին պատմվածքը:

Ինչպիսի՜ գովեստներ են շռայլում հյուրերը հեքիաթասանի հասցեին նրա առաջին պատմվածքը լսելուց հետո... Նրանք շարբաթի պես քաղցր խոսքեր են ասում նրան: Եվ դրանցով ոգեշնչված՝ Սեյֆուտդինը սկսում է իր երկրորդ պատմությունը:

Երկրորդ պատմությունը մի այնպիսի հիացմունք է առաջացնում, որ ունկնդիրներից շատերն ընկնում են իրենց բարձերի վրայից, իսկ ինքը՝ տանտերը, զզզզված մորուքով ու չռված աչքերով այնպես է նայում, ասես խելքը կորցրել է: Եվ չնայած հին ադաթը արգելում էր կանանց և երեխաներին մասնակցելու տղամարդկանց զրույցին, շատ կանայք ու երեխաներ են հավաքվում Սեյֆուտդինի երրորդ պատմությունը լսելու:

Չորրորդ պատմությունը լսելու համար թռչում գալիս են այգու բոլոր թռչունները:

Իսկ երբ հռչակավոր հեքիաթասանը սկսում էր իր հինգերորդ պատմությունը, վաճառականի պատուհանների տակ հավաքվում են շուկայի բոլոր ուղտերն ու ավանակները, չնայած վաղուց ի վեր հայտնի է այն ճշմարտությունը, որ ավանակը բանաստեղծների երգերից անգամ նախընտրում է իր մի խուրձ թարմ խոտը:

Ահա թե ինչպիսի անկրկնելի, անհամեմատելի, դող ու հուզմունք առաջացնող, երանություն պարգևող արտակարգ արվեստ էր ճարտասան Սեյֆուտդինի արվեստը:

Գիշերը մոտենում էր, իսկ խոսքերը ոսկե ջրի պես հոսում ու հոսում էին հեքիաթասանի շուրթերից:

Երբ Սեյֆուտդինը սկսել էր իր հարյուրմեկերորդ պատմությունը, նրան քաղաքավարությամբ առաջարկեցին հանգստանալ և ուժերը թեյով վերականգնել, սակայն իր արվեստով ոգևորված Սեյֆուտդինը արդեն ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում, նա շարունակում էր պատմել: Նա պատմում էր, պատմում, բայց երկու հարյուր մեկերորդ պատմության ժամանակ նույնիսկ ամենադիմացկուններն ու համբերատարները կամաց-կամաց դուրս էին գալիս վաճառականի տնից:

Երեք հարյուր մեկերորդ պատմության ժամանակ վայր ընկան ուղտերն ու ավանակները: Իսկ Սեյֆուտդինը պատմում էր, հա պատմում: Տունը ընկղմվում էր խավարի մեջ, ոչ ոք այլևս թեյ չէր պատրաստում, նույնիսկ դռները փակող չկար, որովհետև բոլոր սպասավորները փախել էին: Միայն տանտերն էր, որ չէր համարձակվում խախտել հյուրընկալության պարտավորությունները: Նա մահ էր աղերսում. չիմանալով ինչ-պես ազատվել հեքիաթասանների անխիղճ արքայից, ալլահից մահ էր աղերսում:

Եվ ահա, երբ վաճառականը մոտ էր մահվան, պատուհանից ներս է նայում նրա հավատարիմ կին Սալթան-Բիբին: Խեղճ կինը չէր կասկածում, որ վաճառականը վաղուց արդեն պիտի խեղդված

լիներ պատմությունների սարսափելի հեղեղից, և եկել էր թաղելու իր ամուսնու ոչնչացած մարմինը: Բայց վաճառականը դեռևս շնչում էր: Տեսնելով կնոջը, նա սիրտ է առնում և, հավաքելով վերջին ուժերը, տնքալով ասում է.

- Օ, Սալթան-Բիբի, հավատարիմներից հավատարիմը: Վազիր անմիջապես քարվան-բաշիի մոտ և ետ գնիր իմ հոգին մահվան ճիրանից:

Վկա է Ալլահը, որ երբ ճերմակահեր քարվան–բաշին ներս էր մտնում վաճառականի տունը, Սեյֆուտդինը պատմում էր իր յոթ հարյուրմեկերորդ պատմությունը:

Դժբախտ տանտերը գրկում է ծերունու ոտքերը և աղերսանքով բացականչում.

- Հայր իմ, նրա համար, որպեսզի ինձ մոտ բերես Սեյֆուտդինին, ես քեզ տվեցի մի մատուցարան նվեր և մի քսակ ոսկի, բայց եթե դու ետ տանես նրան, ես պատրաստ եմ քեզ տալու այն ամենը, ինչ որ ես ունեմ՝ և այս տունը, և այգին, և կրպակներս, և ամբողջ հարստությունս:

Քիչ հրաշքներ չէր տեսել իր կյանքի ընթացքում ճերմակահեր քարվան-բաշին, չի զարմանում նա վաճառականի խնդրանքից:

- Ճշմարիտ են ասում մարդիկ, վարպետը նա չէ, ով լավ է սկսում, այլ նա է, ով կարողանում է ժամանակին վերջացնել:

Մենք նույնպես վերջացնում ենք մեր հեքիաթը, որպեսզի ճարտասան Սեյֆուտդինի օրը չընկնենք:

Հաստ ու բարակ մի գին են

Լինում է, չի լինում՝ մի մարդ: Էս մարդը միայն մի տղա է ունենում: Տեսնում է, որ իրենց երկրում ապրել չի լինում, տղային վերցնում է, շատ երկրներով անցնում, որ տեսնի՝ որտեղ ապրելու հնար կա:

Շատ են գնում թե քիչ՝ մի երկիր են դուրս գալիս, որտեղ մարդիկ ապրանքի լավն ու վատը չեն տարբերում. ամեն տեսակ ապրանք մի գնով են վաճառում՝ բաճկոնն էլ է երեք կոպեկ, մեկ գրվանքա հացն էլ, մեկ գրվանքա[1] սոխն էլ, ձմերուկն էլ, կարտոֆիլն էլ, մի խոսքով՝ ամեն ինչ: Տղան սա որ տեսնում է, ասում է հորը.

– Էս երկիրն իսկական մեր տեղն է. ինչը որ լավն է, կառնենք, կհարստանանք:

Հայրն էլ ասում է.

– Չէ, մի երկրում, որտեղ ապրանքի լավն ու վատը չեն տարբերում, ո՞նց կարող են մեզ ճանաչել, մարդուն գնահատել: Չէ, գնանք մի ուրիշ երկիր:

[1] Կշռի միավոր, 409 գրամ

Ճանապարհ են ընկնում, գնում: Շատ որ գնում են, մի ուրիշ երկիր են հասնում, տեսնում, որ ժողովուրդը հավաքվել է, մի մարդու դատ է լսում: Դատավորն էլ թագավորն է: Թագավորն էդ մարդուն հարցնում է.

– Դու ինչո՞ւ ես տունդ բարձր տեղ սարքել, որ գողը գա, պատուհանիցդ ընկնի, մեռնի: Տունդ որ ցածր կառուցած լինեիր, գողը որ գար, կընկներ, ոտքը կկոտրեր, ձեռքը կկոտրեր՝ ինքը ողջ կմնար: Քանի որ տունդ բարձր ես կառուցել, դրա համար քեզ պետք է կախաղան բարձրացնենք: Ի՞նչ ունես ասելու:

Մարդն ասում է.

– Թագավո՛ր, ապրած կենա, տունը հո ես չեմ կառուցել. վարպետներն են կառուցել: Թե կախելու ես, նրա՛նց կախիր:

Թագավորը կանչում է վարպետներին, հարցնում. «Ինչո՞ւ եք էդ մարդու տունը բարձր կառուցել, որ գողը գա, պատուհանից ընկնի, մեռնի: Դրա համար ձեզ կախում եմ. ի՞նչ ունեք ասելու»:

Վարպետներն ասում են.

– Թագավո՛ր, ապրած կենա, էդ տունը սարքելու ժամանակ քո պալատում մի աղջիկ շատ լավ երգում էր: Երգը լսում էինք, իրեն չէինք տեսնում: Տունը բարձրացրել ենք, որ էդ աղջկան տեսնենք. թե կախելու ես, էդ աղջկա՛ն կախիր:

Թագավորը հրամայում է, որ իր պալատում որքան աղջիկ կա, հավաքեն, բերեն իր մոտ: Իսկ աղջիկներ՝ ինչքան ասես: Բոլորին հավաքում բերում են, հարցուփորձ անում, տեսնում, որ երգողը թագավորի մինուճար աղջիկն է եղել: Թագավորն իր աղջկան հարցնում է, թե՝ ինչո՞ւ ես քո սենյակից երգել, որ վարպետներն էլ քո երգի պատճառով էն մարդու տունը բարձր են սարքել, որ գողն ընկնի, մեռնի:

Աղջիկը չի կարողանում պատասխանել: Թագավորը հրամայում է, որ իր աղջկան տանեն կախեն:

Տանում են, պարանն օղակ անում, աղջկան բարձրացնում աթո-

ռին, օղը գցում վզին, որ կախաղան բարձրացնեն: Աղջկա գլուխն ու ծնոտն էնքան փոքր են լինում, որ օղակը դուրս է գալիս, աղջիկն ընկնում է ցած: Երեք անգամ օղակը վիզն են գցում, երեք անգամ էլ դուրս է գալիս, ընկնում գետնին: Թագավորն իր նազիր-վեզիրին ասում է.

– Գնացեք, տեսեք՝ մեծ գլուխ ունեցող մարդ կա՞. բռնեք բերեք, կախեք:

Նազիր-վեզիրը նայում են, հավաքվածների մեջ տեսնում, որ մի մեծ գլխով, գանգուր մազերով մարդ, իր տղայի հետ կանգնած, դիտում է տեսարանը: Գնում, ասում են.

– Թագավորը քեզ կանչում է:

Մարդն իր որդու հետ մոտենում է թագավորին, գլուխ տալիս, կանգնում: Թագավորն ասում է.

– Սրա գլուխն ամենամեծն է. կախեք սրան:

Մարդն ասում է.

– Թագավո՛ր ն ապրած կենա, գիտեմ, որ իմ մեղքը մենակ մեծ գլուխ ունենալն է, էդ պատճառով էլ ինձ կախելու եք: Հինգ րոպեից հետ եմ գալու՝ իմաստուն դարձած:

Թագավորը թե՝ դե, որ էդպես է, ի՛նձ կախեք. ով ինչը չգիտի, թող մտքում պահի, հինգ րոպեից իմաստուն դարձած կգամ, ամեն ինչը կասեմ:

Թագավորն էսպես ասում է, ցատկում, բարձրանում աթոռին: Դահիճը պարանը գցում է վիզը, աթոռը տակից քաշում: Սպասում են հինգ րոպե՝ թագավորը չկա, տասը րոպե՝ թագավորը չկա, քսան րոպե՝ էլի չկա. թագավորը մեռել է: Ո՞ւմ թագավոր դարձնեն, ո՞ւմ՝ ոչ. բերում, մեծ գլուխ ունեցող մարդուն թագավոր են դարձնում:

Ագահ տիրուհին

Օրերից մի օր մի շրջիկ վաճառական, ապրանքով լիքը մեծ հակն ուսին, մտավ գյուղի հյուրանոց, որի տիրուհին շատ ագահ կին էր: Երբ նա հակը տեսավ, շատ ուզեց, որ ձեռից առնի: Վաճառականին ուղեկցեց սենյակ, իսկ ինքը գնաց խորհրդակցելու ամուսնու հետ, թե հակը խլելու գործը ոնց հաջողեցնի:

– Դա շատ հեշտ է,– ասաց ամուսինը:– Հարկավոր է մյոգի տերևներ քաղել և խառնել ճաշին: Մյոգի տերևներ ուտողը զրկվում է հիշողությունից: Վաճառականը ճաշն ուտելուց հետո անպայման հակը կմոռանա ու կգնա:

Տանտիրուհին այդպես էլ արեց, գնաց այգի, քաղեց մի գրկաչափ մյոգի տերև, եփեց և խառնեց զանազան ուտելիքների, նույնիսկ բրնձի հետ: Եվ ընթրիքին մատուցեց:

Ընթրելիս վաճառականը ոչինչ չնկատեց: Միայն գլուխը թեթեվակի պտտվեց, դեմքը կարմրատակեց, և քունը տարավ: Նա գնաց սենյակ, պառկեց և իսկույն քնեց: Արթնացավ վաղ առա-

վոտյան՝ լույսը դեռ չբացված, ծանրացած գլխով, հավաքեց իրերն ու ճամփա ընկավ:

Տանտիրուհին սպասեց-սպասեց և վաճառականի հեռանալուն պես ակնթարթորեն նետվեց նրա սենյակը՝ հակը թռցնելու: Բայց սենյակը դատարկ էր: Տանտիրուհին ամեն ինչ տնտղեց, տակնուվրա արեց: Հակն ասեղ չէր, որ չնկատվեր: Ման եկավ ման, չգտավ և սրտնեղած վազեց ամուսնու մոտ.

– Մյոգի տերևները բանի պետք չէին, իզուր եփեցի: Նա գնացել է և ամեն ինչ հետը տարել:

– Չի՛ կարող պատահել: Ով ուտում է այդ մոգական խոտը, անպայման մի բան մոռանում է: Աչքդ դես-դեն արած փնտրի՛ր: Հաստատ մի բան մոռացած կլինի:

Տանտիրուհին նորից սենյակ նետվեց: Ամեն ինչ տակնուվրա արեց և էլի ոչինչ չգտավ: Վերջը կանգնեց, կանգնեց սենյակի կենտրոնում և շվարած չորս կողմը նայեց: Հանկարծ ձեռքը խփեց ճակատին և ձայնը գլուխը գցեց.

– Մոռացել է, մոռացել:

Կնոջ ձայնից ամուսինն իսկույն մոտեցավ:

– Դե ի՞նչ, ի՞նչ է մոռացել:

– Մոռացել է վճարել…

Խելքից խեղճը

Խելքից խեղճ մի մարդ հիվանդ, ծեր ու անպետք մի եզ է ունենում: Ուզում է դրանից ազատվել, մեկնումեկի գլխին կապել, բայց չի կարողանում: Հարևանին խնդրում է, որ իրեն օգնի՝ եզը ծախեն:

Հարևանը ասող-խոսող, լեզվանի, ճարպիկ մեկն է լինում: Եզն առաջ են գցում ու միասին գնում շուկա՝ վաճառելու: Գնորդներ են գալիս, եզան շուրջը հավաքվում:

– Էս եզը տեսնո՞ւմ եք,– ասում է հարևանը,– Աստված էլ գիտի, որ եզ չէ, գոմե՛շ է, գոմե՛շ, իսկական գութանի թև. հա՛մ լծվում է, հա՛մ բարձվում է, հոգնելն ի՞նչ է՝ չգիտի: Անտե՛ր մնա աղքատությունը. որ նեղության մեջ չլինեինք, ձեռքներս կբռնե՞ր, որ ծախեինք իմ առյուծ եզը:

Եզան տերը նրա ականջին փսփսում է.

– Հարևա՛ն, որ իմ եզն էդքան լավն է, է՛լ չծախենք:

Վինսենթ աժդահան

Ծովափնյա մի քաղաքում ապրում էր մի տղա՝ Վինսենթ անունով: Վինսենթը իր ապրուստը վաստակում էր նավահանգստում՝ նավեր բարձելով ու բեռնաթափելով: Նա այնքան ուժեղ էր, որ կարող էր մենակ երեք հոգու բեռ շալակել: Դրա համար էլ բոլորը նրան կոչում էին Վինսենթ Աժդահա: Մեղմ, ուրախ բնավորություն ուներ Վինսենթ Աժդահան, սակայն միամիտ էր, այնքան միամիտ, որ հաճախ էր ընկնում ծիծաղելի վիճակների մեջ:

Մի օր Վինսենթի ընկերները նոր խաղ են սարքում բարեսիրտ աժդահայի գլխին: Նրանք որոշում են Վինսենթին համոզել, որ նա կարող է անտեսանելի դառնալ և անարգել ելումուտ անել թագավորի ամառային պալատում:

Առավոտյան, երբ Վինսենթ Աժդահան սովորականի պես գնում է նավահանգիստ, տեսնում է՝ ընկերները հավաքվել են մի տղայի շուրջը, որի ձեռքին տոպրակ կար, և տաք-տաք վիճում են ու տմբտմբացնում են գլուխները:

Վինսենթին բացատրում են, որ այդ տոպրակի մեջ կախարդական փոշի կա, որը ցանկացած մարդու կարող է դարձնել անտեսանելի: Եթե ուզում ես, որ քեզ ոչ ոք չտեսնի, տոպրակը դնում ես գրպանդ, գլուխկոնծի ես տալիս և հաշվում ես մինչև երեքը՝ մեկ, երկու, երեք...

Այսպես են բացատրում միամիտ Վինսենթին, և նա ընկնում է ընկերների թակարդը:

– Պատկերացնո՞ւմ ես,– շարունակում են ընկերները,– երբ խելքիդ փչի, դու անարգել կարող ես մտնել թագավորի ամառային պալատը, որտեղ ամեն ինչ կա, ինչ սիրտդ ուզի:

– Հասկանում եմ,– ասում է Վինսենթը,– հետո՞ ինչ: Եթե, ենթադրենք, ես ամուսնացա, իմ հարսնացուն ինչպե՞ս է տեսնելու ինձ: Կամ էլ, ես ինչպե՞ս իմանամ՝ նա ինձ հավանո՞ւմ է, թե՞ ոչ: Չէ, ես չեմ ուզում միշտ անտեսանելի լինել:

– Էխ, Վինսենթ, ինչ միամիտ տղա ես,– ասում է ընկերներից մեկը:– Եթե ուզում ես, որ քեզ նորից տեսնեն, հիմա էլ սկսում ես հակառակ կողմից հաշվել՝ երեք, երկու, մեկ, հետո գլուխկոնծի ես տալիս և նորից դառնում ես տեսանելի:

– Իսկ ձեզնից որևէ մեկն արդեն փորձե՞լ է դառնալ անտեսանելի,– հարցնում է Վինսենթը:

– Ոչ,– պատասխանում է ընկերը:– Գիտե՞ս, Վինսենթ, ճիշտն ասած, մենք բոլորս էլ վախենում ենք...

– Պահ,– ոգևորվում է Վինսենթը,– այ քեզ հետաքրքիր մարդիկ: Դե լավ, ես կփորձեմ:

Վինսենթը վերցնում է տոպրակը, որի մեջ սովորական ավազ էր լցված, և դնում է գրպանը:

Հետո գլուխկոնծի է տալիս և հաշվում է՝ մեկ, երկու, երեք...

– Վինսենթ, Վինսենթ,– կանչում են ընկերները,– Վինսենթ, որտե՞ղ ես: Վինսենթն անհետացավ, Վինսենթն անհետացավ... Հա էլի՛, իսկապես որ փոշին կախարդական էր:

Նրանք ծիծաղը հազիվ էին զսպում, իսկ Վինսենթը, ինքն իրենից գոհ, ժպտում էր: «Հիմա ինձ ոչ ոք չի տեսնում,– մտքում ասում է նա:– Ուրեմն՝ առաջ, դեպի թագավորի պալատը»: Ասում է ու ճանապարհ է ընկնում:

Գնում է, գնում, քաղաքից դուրս է գալիս: Թագավորի պալատը գտնվում էր մի բլրի գագաթին: Պահակները տեսնում են, որ աստիճաններով մի երիտասարդ է բարձրանում: Նա այնպես վստահ ու համարձակ էր մոտենում, որ պահակները կարծում են, թե կամ փականագործ է, կամ հյուսն, կամ էլ ապակեգործի աշակերտ, որին կանչել են սնդուկ վերանորոգելու կամ պատուհանների ջարդված ապակիները փոխելու:

Վինսենթն անարգել պալատ է մտնում և նույն համարձակությամբ շարունակում է առաջ գնալ: Նա քայլում է նախասենյակներով ու ընդարձակ սրահներով, հանդիպում է տարբեր մարդկանց, բայց նրանցից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում հարցնել, թե նա ինչ գործ ունի թագավորի պալատում: Վինսենթը քայլում էր ու զարմացած նայում պատերին փակցրած փայտե ոսկեզօծ զարդաքանդակներին, պատկերազարդ գորգերին, նախշերով կահույքին, հախճապակյա ջահերին: Վինսենթը նայում էր և հիանում այդ ամենով:

«Ինչ լավ է, երբ մարդ անտեսանելի է,– մտածում էր նա:– Եթե իմանայի, որ փայլփլուն մազեր ունեցող այս սպասավորներն ինձ տեսնում են, ես չէի կարողանա այսպես համարձակ ման գալ թագավորի պալատում, որովհետև նրանք կծաղրեին ու ինձ դուրս կանեին այստեղից»:

Այսպես մտածելով՝ Վինսենթը մի սենյակից մյուսն է անցնում, մինչև հասնում է թագավորի աղջկա սենյակը: Նա տեսնում է բազմոցին մի աղջիկ է պառկել և հոնգուր-հոնգուր լաց է լինում: Քանի որ Վինսենթը բարի էր և փխրուն սիրտ ուներ, այդ գեղեցիկ էակի վիշտը նրան շատ է հուզում:

Որպեսզի տեսանելի դառնա, նա շշուկով հաշվում է՝ երեք, երկու, մեկ, հետո գլուխկոնծի է տալիս և, մոտենալով աղջկան, հարգանքով խոնարհվում է ու հարցնում, թե ինչու է նա լաց լինում:

Թագավորի աղջիկն այնքան վշտացած էր, որ նույնիսկ չի էլ զարմանում, թե այդ անծանոթ երիտասարդն ինչ գործ ունի իր սենյակում: Նա Վինսենթին ասում է, որ իր տխրության պատճառը հարևան երկրի արքայորդին է, շատ չար ու տգեղ մի տղա, որը խնդրել է իր ձեռքը, բայց ինքը չի ուզում նրա կինը դառնալ:

– Իսկ եթե ես չհամաձայնեմ նրա հետ ամուսնանալ,– շարունակում է թագավորի աղջիկը,– նա զորքը կհավաքի ու կհարձակվի մեր պալատի վրա, հորս կսպանի, իսկ ինձ կփախցնի կտանի իր երկիրը:

– Դուք նրա հետ չեք ամուսնանա,– վրդովվում է Վինսենթ Աժդահան:– Այդ էր պակաս:

– Եթե չամուսնանամ,– ասում է թագավորի աղջիկը,– նա կքանդի պալատը, կկործանի ամբողջ քաղաքը և բոլորին կսպանի:

– Ես թույլ չեմ տա,– նորից բռնկվում է Վինսենթ Աժդահան:–Ես գիտեմ, թե ինչ կբերեմ նրա գլխին: Հենց հիմա գնացեք Ձեր հոր մոտ և ասեք, որ եթե աշխարհն էլ շուռ գա, Դուք այդ անպիտան արքայազնի կինը չեք դառնա: Եվ ոչ մի բանից մի վախեցեք:

Արքայադուստրը վազում է հոր մոտ: Խեղճ թագավորը, որի միակ հույսը սրբերն էին մնացել, համաձայնում է դիմել անծանոթ երիտասարդի օգնությանը, որն ասես երկնքից էր իջել: Նա անմիջապես մի սուրհանդակ է ուղարկում հարևան երկրի արքայազնի մոտ: Սուրհանդակը լուր է տանում, որ թագավորի աղջիկը մերժում է նրա առաջարկը, չի ուզում ամուսնանալ նրա հետ:

Կարճ ժամանակ անց դղյակի շուրջը շեփորներ են փչում: Դա նշանակում էր, որ կատաղած արքայազնը իր զորքով հարձակվել էր թագավորի երկրի վրա:

– Մեկ, երկու, երեք,– հաշվում է Վինսենթ Աժդահան և գլուխկոնծի է տալիս:

Մեծ, երկար սուրը օդում ճոճելով՝ նա հարձակվում է թշնամու զորքի վրա: Համոզված, որ իրեն ոչ ոք չի տեսնում, Վինսենթն այսպես էր մտածում. «Բավական է, որ ես հարվածեմ ու մի կողմ թեքվեմ: Զինվորները խարխափելով կսկսեն ինձ փնտրել, իսկ ես նրանց կհարվածեմ բոլորովին ուրիշ կողմից»: Այդպես էլ անում է: Բայց, քանի որ նա շատ ուժեղ էր և ամուր բազուկ ուներ և քանի որ ոչ մի բանից չէր վախենում, այնպես է հարվածում թշնամու զինվորներին, որ նրանք մեկը մյուսի հետևից թափվում են գետնին: Վինսենթը իր հերոսությամբ օրինակ է ծառայում թագավորի զորքին, որը նույնպես մարտնչում էր խիզախորեն:

Շուտով թշնամին, մեծ զոհեր տալով, նահանջում է՝ հազիվ փախցնելով գազազած արքայորդուն:

Թագավորն անչափ ուրախանում է, գրկում ու համբուրում է Վինսենթ Աժդահային:

– Կեցցե՛ս,– բացականչում է թագավորը,– մի տեսեք, թե ինչ ռազմիկ ունենք: Անունդ ի՞նչ է:

– Վինսենթ Աժդահա, Ձերդ մեծություն, Ձեր խոնարհ ծառան:

– Աստված վկա, հրաշալի անուն է,– ասում է թագավորը:– Դու երևի ասպետ ես:

– Ոչ, Ձերդ մեծություն,– պատասխանում է Վինսենթ Աժդահան,– ես ասպետ չեմ, բայց ես անտեսանելի եմ:

– Այ քեզ բան,– զարմանում է թագավորը և սկսում է ոտքից գլուխ զննել Վինսենթին:– Իսկ իմ մտքով երբեք չէր անցնի, որ դու անտեսանելի ես: Ոչինչ,– շարունակում է թագավորը,– ինչ ուզում ես եղիր, ես քեզ ասպետի կոչում եմ շնորհում: Պահանջիր ինչ ուզում ես, ես կկատարեմ քո ցանկությունը:

– Թագավորն ապրած կենա,– ասում է Վինսենթ Աժդահան,– ես խնդրում եմ Ձեր աղջկա ձեռքը:

– Օհո՛,– բացականչում է թագավորը,– դու իսկապես շատ համարձակ մարդ ես: Եթե աղջիկս համաձայն է, ինձ հենց քեզ պես փեսա է պետք՝ ուժեղ ու համարձակ:

Թագավորի աղջիկը համաձայնում է ամուսնանալ նրա հետ: Հարսանիք են անում, ուտում, խմում, ուրախանում: Հարսանիքից հետո արքայադուստրը ամուսնուն խնդրում է անտեսանելի դառնալ: Աղջիկն ուզում էր տեսնել, թե դա ինչպես է կատարվում: Բայց Վինսենթ Աժդահան ինչ անում է, չի անում, ոչինչ չի ստացվում:

– Մեկ, երկու, երեք... Մեկ, երկու, երեք,– անընդհատ կրկնում էր Վինսենթն ու գլուխկոնծի էր տալիս: Եվ ամեն անգամ, երբ ոտքի էր կանգնում, արքայադուստրը ծիծաղում էր և ասում.

– Ես քեզ տեսնում եմ, ես քեզ տեսնում եմ...

– Այ քեզ բան,– զարմանում է Վինսենթը,– ինչքան էլ հաշվում եմ ու գլուխկոնծի տալիս, բան չի ստացվում, ես միշտ տեսանելի եմ մնում: Երևի կռվի ժամանակ ինչ-որ մեկը սվինով ծակել է գրպանիս տոպրակը, և կախարդական փոշին թափվել է:

Երազը

Հուր չեն ասում, որ կանայք կարող են լուն ուղտ դարձնել: Սեյդի գյուղացի Մուլքունց Վանին մի գիշեր երազում տեսնում է, որ իր բեղերի փոխարեն կանաչու մի թև[1] է աճել: Ինքն իրեն մտածում է, որ դա վատ նշան է, իրեն մի դժբախտություն է պատահելու: Վախից վեր է կենում ու կնոջը՝ Զառնիշանին, պատմում.

– Ա՛յ կնիկ, բա չես ասի՞, երազումս տեսա, որ բեղերիս փոխարեն մի թև կանաչի է աճել:

Կինն էլ է մտածմունքի մեջ ընկնում: Կուժը վերցնում է, գնում ջրի: Ճանապարհին հանդիպում է հարևանի կնոջն ու նրան պատմում.

– Գյուլգյա՛զ, բա չես ասի՞, մարդս էս գիշեր երազում տեսել է, որ բեղերի փոխարեն մի փունջ կանաչի է աճել:

Գյուլգյազը գնում է, տեսնում՝ թոնրատանը շատ երեխաներ ու կանայք են հավաքվել, նրանց սկսում է պատմել.

[1] Մի ճյուղ

– Բա չեք ասի, Զառնիշանի մարդն էս գիշեր երազում տեսել է, որ իր բեղերի փոխարեն մի փունջ կանաչի ու մի փունջ էլ կոտեմ է աճել:

Բոլորը զարմանում են, ամեն մեկը գնում, սա պատմում է իր տնեցիներին՝ իր չափով ավելացնելով.

– Զառնիշանի մարդը՝ Վանին, երազում տեսել է, որ բեղերի փոխարեն մի-մի փունջ կանաչի, կնձմնձուկ, խազազ, մի փունջ կոտեմ, մի փունջ սոխ, մի կապ բողկ, մի փունջ համեմ, նանա, ռեհան, սամիթ, թարխուն է աճել:

Էսպես, մեկը մեկի ասածին ավելացնելով, պատմում են, ու ստացվում է, որ Վանին երազում տեսել է, որ իր դեմքին տասներկու փունջ կանաչի է աճել:

Մի օր հանդից տուն վերադառնալիս Վանին նկատում է, որ համագյուղացիներից մեկն ուշադիր իր դեմքին է նայում:

– Էդ ինչի՞ ես էդպես նայում,– հարցնում է Վանին:

Համագյուղացին չի զսպում իրեն ու ասում է.

– Ա՛յ մարդ, ես լսել եմ, որ դեմքիդ տասներկու փունջ կանաչի է աճել, բա ո՞ւր է:

– Երազումս եմ տեսել,– բացատրում է Վանին,– էն էլ ի՞նչ տասներկու փունջ, ի՞նչ բան… տասներկու փունջ լիներ, մի բոստան կլիներ էլի…

Համագյուղացին մնում է զարմացած, թե մի թև կանաչին ո՞նց է տասներկու փունջ դարձել:

Մարդն ու կինը

Ժամանակով մի մարդ ու կին են լինում: Մարդը գնում է հանդ, հունձ անում, խոտ հարում, վար անում, իսկ կինը տան գործերն է անում, խմոր հունցում, հավ ու ճտին տեր կանգնում: Էդպես միասին շատ հանգիստ ու խաղաղ ապրում են:

Մի օր մարդը հանդից հոգնած գալիս է տուն: Կինը նրա ոտքերը լվանում է, կերակրում, թեյ տալիս, անկողինը բացում ու ասում է.

– Գնա քնի՛ր, հոգնած ես:

Մարդն ասում է կնոջը.

– Կնի՛կ, Աստված ո՞նց կհանդուրժի, որ դու տանը հանգիստ նստես, իսկ ես գնամ, հանդում չարչարվեմ:

Կինը ծիծաղում է և ասում.

– Որ էդպես է, դու մնա տան գործերն արա, ես էլ գնամ հանդում աշխատեմ:

Ամուսինը համաձայնում է:

Առավոտյան կինն արթնանում է, ամուսնուն հարցնում.

– Ա՛յ մարդ, ես գնում եմ հանդ: Ասա տեսնեմ՝ ի՞նչ պիտի անեմ:

– Իմ չափը քսանհինգ խուրձն է,– պատասխանում է մարդը,– էդքան կինձես, կեսօրին էշին պիտի ջուր տաս, տուն գալիս էլ հետդ մի քիչ խոտ կբերես, որ իրիկունը էշին տանք:

Հետո էլ ամուսինն է կնոջը հարցնում.

– Ե՞ս ինչ պիտի անեմ:

Կինը պատասխանում է.

– Մի քիչ մածուն կա, կլցնես խնոցին, կհարես, ճտերին կնայես, որ ուրուրը չտանի, համ էլ մի թոնիր հաց կթխես:

Մարդը համաձայնում է: Կինը հանդ է գնում, ինքը մնում է տանը: Կնոջ գնալուց հետո մի երկու բաժակ օղի է խմում, հետո խմորի պատրաստություն տեսնում, որ խմորը հունցի: Բայց մինչև խմորին անցնելը ճտերին թելով իրար է կապում ու կապ գցում հավի ոտքերից, որպեսզի իր կողքից չհեռանան: Հետո գալիս է, որ խմորը հունցի: Մեկ էլ մտածում է, որ կարող է երկու գործը մեկ անել, շուտ պրծնել ու հանգիստ նստել: Խնոցին կապում է մեջքին, չոքում ու սկսում է խմորը հունցել: Մտածում է՝ խմորն ինքը կհունցի, իր շարժումների հետ էլ՝ խնոցին կհարվի: Թունդ գործի ժամանակ մեկ էլ հարևանը հարա՛յ է կանչում, թե՝ հե՛յ, Առաքե՛լ, հասի՛ր, ուրուրը ճտերը տարավ: Մարդը տեսնում է, որ ուրուրը մի ճտին բռնել է, մնացածն էլ թխսի հետ մեկտեղ բարձրանում են օդ: Արագ դուրս է գալիս, որ ճտերն ազատի, մեջքին կապված խնոցին դռանն է կպչում, կոտրվում: Ոտքից գլուխ թանով է ծածկվում, բայց վազում է ճտերի կողմը: Ինքը՝ ճտերի կողմը, բակում վազվզող խոզն էլ՝ խմորի կողմը. տաշտի խմորը մաքուր լպստում է: Առաքելը տխուր-տրտում նստում է մինչև մութն ընկնելը:

Մթնում է թե չէ, կինը գալիս է, ասում.

– Ա՛յ մարդ, քո չափը քսանհինգ խուրձն է, ես երեսունն եմ հնձել, էշին ջուր եմ տվել, լավ կանաչ խոտ եմ բերել, աղբյուրից էլ մի կուլա սառը ջուր եմ բերել. վերցրո՛ւ, խմի՛ր:

Կուլան տալիս է ամուսնուն ու հարցնում.

– Հը՞, խմորն ի՞նչ հալի է:

Մարդն ասում է.

– Խմորի մասին խոզի՛ն հարցրու:

– Բա խնոցի՞ն:

Մարդն ասում է.

– Խնոցու մասին դռա՛նը հարցրու, ճտերի մասին էլ՝ ուրուրին: Համ էլ, ա՛յ կին, մնա տանդ տե՛ր կանգնիր, իսկ ես գնում եմ իմ գործին:

Ապենդին և ջիգիթները

Ապենդին ունենում է մի չաղ ոչխար: Մի անգամ նրա մոտ գալիս են մի քանի երիտասարդ ջիգիթներ և որոշելով նրա հետ կատակել, ասում են.

- Օ, Ապենդի, դու գիտես, որ վաղը աշխարհի վերջն է: Անտեղի կկորչի քո ոչխարը: Իսկ որպեսզի իզուր չկորչի, արի նրա վիզը կտրենք և ուզածիդ չափ միս ուտենք:

Ապենդին համաձայնում է ոչխարի վիզը կտրել:

Սպասելով, որ համեղ միս պիտի ուտեն, ջիգիթները գնում են գետակ լողանալու:

Երբ նրանք գնում են, Ապենդին տեսնում է, որ ինքը փայտ չունի: Այդ ժամանակ նա վերցնում է ջիգիթների հագուստներն ու վառում:

Ջիգիթները շուտով վերադառնում են.

- Էյ, Ապենդի, ո՞ւր են մեր հագուստները:

- Իսկ ես նրանցով միսը եփեցի,- պատասխանում է Ապենդին:

- Դու էդ ինչպե՞ս համարձակվեցիր,- հարձակվում են նրա վրա ջիգիթները:

- Արժի՞ վրդովվել հագուստի համար, եթե վաղը աշխարհի վերջն է,- ասում է Ապենդին քմծիծաղով:

Այսպես կատակասերները մնում են մերկ:

Ինչու է եղջերու-Ամբեկոն լեռներում ապրում

Մի անգամ Եղջերու-Ամբեկոն ու Կրիա-Ագուատին հանդիպում են ու սկսում վիճել, թե իրենցից ո՞վ է արագ վազում:

Կարծես թե այստեղ վիճելու բան էլ չկա: Բոլորն էլ գիտեն, թե որքան արագ է վազում եղջերուն, և որքան դանդաղ է քարշ գալիս կրիան: Բայց Կրիա-Ագուատին համառորեն ուզում է չափել իր ուժերը Եղջերու-Ամբեկոյի հետ:

- Դու կարող ես ինձնից երեք օր առաջ ճամփա ընկնել,- ասում է Եղջերու-Ամբեկոն:

- Ոչ, ես այդ չեմ ուզում,- պատասխանում է Կրիա-Ագուատին,- բայց ինձ տասնհինգ օր է պետք, որպեսզի պատրաստվեմ:

Եղջերու-Ամբեկոն համաձայնում է:

Նրանք որոշում են տասնհինգ օրից հետո վազել մի երկար ճանապարհով, որը ընկած է լինում երկու գյուղերի միջև: Նա, ով առաջինը վազելով ետ կդառնար, նա էլ կլիներ հաղթողը:

Եղջերու-Ամբեկոն գոռոզաբար զբոսնում է իր գյուղում և ծիծաղում փոքրիկ կրիայի վրա:

Իսկ Կրիա-Ագուատին կանչում է իր նման փոքրիկ երկու քույրերին և նրանց ասում.

- Շտապեցեք, շո՛ւտ. մեկդ մոտակա գյուղը, իսկ մյուսդ՝ հեռուն: Ես պետք է այդ գյուղերով վազեմ ղջերու-Ամբեկոյի հետ: Հենց որ կտեսնեք Եղջերու-Ամբեկոյին, առաջ կշարժվեք ճանապարհով: Թող նա կարծի, որ ես իրենից արագ եմ վազում:

Եվ կրիա քույրերը ճանապարհ են ընկնում:

Նշանակված օրը Եղջերու-Ամբեկոն և Կրիա-Ագուատին մրցման են ելնում: Եղջեբու-Ամբեկոն այնպես արագ է վազում, որ շուտով անհետանում է: Իսկ Կրիա-Ագուատին փոխանակ նրա ետևից վազելու, թաքնվում է թփերի մեջ:

Երբ Եղջերու-Ամբեկոն արդեն անցնում է առաջին գյուղը, սկսում է ուրախ երգել.

- Արագատն Ամբեկոյից չե՛ն անցնի, չե՛ն անցնի, չե՛ն անցնի:

Նա համոզված էր, որ Կրիա-Ագուատին իրենից շատ է ետ մնացել, և ինքը ժամանակ կունենա սափրվելու: Չէ՞ որ այդ ժամանակամիջոցում, երբ այս բոլորը տեղի էր ունեցել, Եղջերու-Ամբեկոյի մորուքը այնքան էր երկարել, ինչպես երիտասարդ այծերինը: Եվ Եղջերու-Ամբեկոն գնում է մորուքը խուզելու:

Բայց նրա մորուքի դեռ միայն կեսն էին խուզել, երբ ճանապարհին հանկարծ դուրս է գալիս կրիան և այսպիսի մի երգ երգում.

- Ագուատին արդեն այստեղ է, արդեն այստեղ է, արդեն այստեղ է:

Եղջերու-Ամբեկոն որոշում է, որ դա Կրիա-Ագուատին է: Նա դուրս է պրծնում և շարունակում է առաջ վազել:

Ահա թե ինչու Եղջերու-Ամբեկոն մինչև օրս մնացել է կես մորուքով:

Եղջերու-Ամբեկոն վազում է առաջվանից էլ ավելի արագ և, վստահ լինելով, որ հիմա արդեն կրիան իրենից չի անցնի, նորից երգում է իր երգը:

- Արագաոտն Ամբեկոյից չե՛ն անցնի, չե՛ն անցնի, չե՛ն անցնի:

Բայց Եղջերու-Ամբեկոն շատ քաղցած է լինում: Երբ նա արդեն վազելիս է լինում երկրորդ գյուղով, որոշում է գնալ ճաշելու: Չի հասցնում նա առաջին պատառը կուլ տալ, երբ ճանապարհին տեսնում է կրիային, որը արդեն երգում էր իր երգը:

- Ագուատին արդեն այստեղ է, արդեն այստեղ է, արդեն այստեղ է:

Եղջերու-Ամբեկոն որոշում է, որ դա Կրիա-Ագուատին է: Նա դուրս է պրծնում և ետ վազում, այդպես էլ առանց ճաշելու:

Ահա թե ինչու Եղջերու-Ամբեկոն այժմ այնքան նիհար է, կարծես կողերը իրար կպած լինեն:

Այսպես էլ վազում է, վազում Եղջերու-Ամբեկոն՝ անընդհատ արագացնելով քայլերը և մեկ էլ տեսնում է իր հարազատ գյուղը:

Վստահ, որ ինքը առաջինն է հասել, նա ուրախ սկսում է երգել իր երգը.

- Ագուատին Ամբեկոյից չի՛ անցնի, չի՛ անցնի, չի՛ անցնի:

Բայց Կրիա-Ագուատին լսում է նրա երգը, դուրս է գալիս թփերի տակից և սկսում երգել ամբողջ ձայնով մեկ.

- Ագուատին արդեն այստեղ է, արդեն այստեղ է, արդեն այստեղ է:

Այդ ժամանակ բոլոր գազանները սկսում են Եղջերու-Ամբեկոյի վրա ծիծաղել, որ նրանից առաջ է անցել փոքրիկ կրիան:

Եղջերու-Ամբեկոն վիրավորվում է խիստ և զայրանում: Նա վազում է լեռների բարձունքները և մինչև օրս էլ չի իջնում ներքև:

Ահա թե ինչու Եղջերու-Ամբեկոն ապրում է լեռներում:

Հշմարտախոս Սվենը

Մի ժամանակ Դանիայում ապրում էր մի գյուղացի: Նա երեք տղա ուներ: Երկու ավագները համոզում են հորը ողջ ունեցվածքն իրենց կտակել: Բայց մեռնելուց առաջ ծերունին, այնուամենայնիվ, կրտսեր որդուն՝ Սվենին էլ է հիշում. չէ՞ որ նրա մասին նա չէր էլ մտածել:

Հայրն իր մոտ է կանչում Սվենին ու ասում նրան.

– Թանկագի՛ն որդյակ իմ Սվեն, ես քեզ մի քիչ նեղացրել եմ, այն ամենը, ինչ ունեի, տվեցի իմ երկու ավագ որդիներին, իսկ քեզ ես կարող եմ կտակել միայն իմ օրհնանքը և իմ հին թաթմանները:

– Դե՛, ի՞նչ արած, հայրի՛կ,– պատասխանում է Սվենը,– այդքանի համար էլ շնորհակալ եմ:- Թաթմաններն ինձ ձմռանը պետք կգան, իսկ ծնողական օրհնանքը ոսկուց ավելի թանկ է:

Շուտով հայրը մահանում է:

Սվենն աղեղն ուսն է գցում, գոտուց կախում սուրը, ֆլեյտան գրպանը դնում, հոր հին թաթմանները դնում ծոցը, մնաս բարով է

ասում եղբայրներին ու գնում երջանկություն փնտրելու:

Հազիվ էր նա դուրս եկել հարազատ գյուղից, երբ ավագ եղբայրների միջև վեճ ու կռիվ է սկսվում ստացած ժառանգության պատճառով, իսկ Սվենն այդ ժամանակ երգելով գնում էր քաղաքներով ու հովիտներով:

Բացվում է գարունը, հալվում է ձյունը, առուներն աղմուկով հոսում են սարերից, իսկ արևոտ երկնքի տակ ուրախ երգում են առաջին արտույտները:

– Հավանորեն ես էլ կարող եմ այդ գեղգեղանքը նվագել,– ասում է ինքն իրեն Սվենը, նստում առվի ափի մի քարի ու սկսում նվագել: Սվենի երաժշտության տակ գետակում սկսում են պարել կարմրախայտները, իսկ թռչունները բոլոր կողմերից թռչում, գալիս ու նստոտում են նրա ուսերին ու գլխարկին և բավականությամբ լսում նրա նվագը:

Երբ քաղցը նեղում էր, Սվենը նետ ու աղեղով նապաստակ էր խփում ու խորովում: Երբ ընկնում էր անտառի թավուտը, սրով կտրատում էր մացառուտներն ու ծառերը և իր համար ճանապարհ բաց անում ու շարունակում առաջ գնալ:

Երեկոները Սվենը մտնում էր գյուղացիների տներն ու նվագում աղջիկների և երիտասարդների համար: Այստեղ նրան հյուրասիրում էին սիդրո ու գարեջուր և պահում գիշերելու:

Այսպես նա անընդհատ գնում էր դեպի հյուսիս, գնում էր ուրախ, առույգ երգով ու ծիծաղով: Ամեն ոք, ով հանդիպում էր Սվենին, նայում էր նրա հետևից ու նախանձով ասում.

– Ա՛յ թե ուրախն է, հա՜, այս երիտասարդը:

Եվ այսպես Սվենը հասնում է այդ թագավորության մայրաքաղաքը: Այնտեղ նա իմանում է, որ թագավորի ծառայապետը մահացել է, և ով ցանկանում է նրա տեղը զբաղեցնել, կարող է դիմել թագավորի պալատ:

Սվենը նույնպես ցանկանում է իր բախտը փորձել և ուղղակի գնում է պալատ:

Թագավորը հոգնած տեսքով նստել էր գահին, նրա մոտ արդեն եղել էին ծառայապետի տեղը զբաղեցնել ցանկացող հարյուրավոր մարդիկ: Թագավորի կողքին՝ նեղ ու բարձր գահին, նստել էր նրա աղջիկը՝ արքայադուստրը՝ ծնկներին բալով լիքը արծաթե մի կողով:

Սվենը ողջունում է թագավորին:

– Բարև,– պատասխանում է թագավորը,– ինչո՞ւ ես եկել:

– Ուզում եմ զբաղեցնել Ձեր ծառայապետի տեղը,– ասում է Սվենը:

– Իսկ դու պիտանի՞ ես արդյոք այդպիսի կարևոր պաշտոնի համար,– հարցնում է թագավորը Սվենին՝ հարդարելով մորուքը:

– Երբ փորձեմ, կասեմ,– պատասխանում է տղան:

Թագավորը նայում է արքայադստերը, իսկ արքայադուստրը նայում է թագավորին ու բալի կորիզը թքում հատակին:

– Չի՛ կարելի այդպես անել,– խստությամբ ասում է Սվենը,– հատակին բծեր կմնան:

– Քո գործը չէ, գեղջո՛ւկ,– զայրացած առարկում է արքայադուստրը, երեսը շրջում ու շարունակում ուտել բալը:

– Տեսնում եմ, որ դու նետաձիգ ես,– ասում է թագավորը,– բայց դու լա՞վ ես նետ արձակում արդյոք և միշտ էլ նշանակետի՞ն ես խփում:

– Կարող է աշխարհում ինձնից ավելի լավ նետաձիգներ լինեն, բայց ես պարտավորվում եմ, ա՛յ, այն անկյունից նետով գցել բալի կորիզը արքայադստեր ափից:

Թագավորն ինչ-որ բան է շշնջում դստեր ականջին, և նա բալի կորիզը դնում է իր ափի մեջ:

Սվենը կանգնում է անկյունում, լարը ձգում: Նետը սուլում է ու խփում գցում կորիզը՝ չքերծելով անգամ արքայադստեր ձեռքը:

– Ա՛խ,– խոր շունչ է քաշում արքայադուստրը՝ կարմրելով, ինչպես բալը,– հոգիս դուրս եկավ նետին սպասելով:

Թագավորը ժպտում ու հարցնում է.

– Հապա մի տեսնեմ, նույնքան լա՞վ ես տիրապետում սրին, որքան նետ ու աղեղին:

– Մեկը լավ է տիրապետում, մյուսը՝ ավելի լավ:

– Դու զարմանալի երիտասարդ ևս,– ասում է թագավորը:– Բոլոր նրանք, ովքեր եկել են ինձ մոտ, պարծեցել են, թե իբր ամեն ինչ կարող են անել, իսկ քեզ որ լսենք, դուրս կգա, որ դու ոչինչ չես կարող անել:

– Ես չեմ ասել, թե ոչինչ չեմ կարող անել,– պատասխանում է Սվենը,– բայց ես ստել չեմ կարողանում:

– Դու ստում ես,– բացականչում է թագավորը,– ամեն ոք կարող է ստել, երբ կարիքն ստիպի:

– Այդ Դուք եք այդպես կարծում,– պատասխանում է Սվենը,– իսկ ես ոչ մի անգամ չեմ ստի, ես այդպիսի մարդ չեմ:

Այդ րոպեին Սվենը տեսնում է գահի մոտից վազող սև կատվին՝ արքայադստեր սիրելիին: Նա դուրս է քաշում իր սուրն ու կտրում կատվի պոչի ամենածայրի մազը:

– Վա՛յ,– բացականչում է սարսափահար արքայադուստրը,– իմ խեղճ փիսիկ, քեզ սպանեց այս չար մարդը:

Եվ նա փակում է աչքերը, իսկ երբ բացում է, տեսնում է, որ իր սիրելի սև կատուն հանգիստ նստել է ոսկեզօծ աթոռի տակ և թաթիկով ջանասիրաբար լվացվում է:

Սվենը թագավորին ցույց է տալիս կատվի պոչածայրի մազը, իսկ թագավորը բացականչում է.

– Դու սուր բանեցնելու մեջ էլ վարպետ ես, բայց ես քեզ մոտ ֆլեյտա եմ տեսնում, երևում է՝ դու լավ երաժիշտ ես:

– Ի՞նչ կա որ, կարող եմ Ձեզ համար նվագել,– համեստորեն պատասխանում է Սվենը:

Ծոցից հանում է ֆլեյտան ու նվագում: Նրա նվագը լսելուն պես թագավորական այգու բոլոր թռչունները թռչում, նստոտում են

Սվենի ուսերին ու գլխին և հրճվանքով լսում նրա նվագը: Արքայադստեր կատուն աչքերը կկոցում է, երգի տակտով տարուբերում գլուխը և թաթիկներով թփթփացնում՝ ասես պատրաստվելով պարելու: Իսկ արքայադուստրն այդպես էլ սառում-մնում է՝ բալը ձեռքին՝ չկարողանալով բերանը տանել:

Երբ Սվենը վերջացնում է, զարմացած թագավորն ասում է.

– Դե՛, ֆլեյտա նվազելու գործում դու երկրորդ Օրփեոսն ես:

Սվենն այսպես է պատասխանում.

– Ես չեմ ճանաչում այդ մարդուն, թագավոր, ես պարզապես նվագում եմ, ինչ կարողանում եմ:

Իսկ արքայադուստրը մտախոհ ասում է.

– Երբ դու նվագում էիր, ինձ թվաց, թե ես տեսնում եմ արեվոտ կանաչ մի հովիտ, կարմրախայտների ուրախ պարը փայլփլող առվի մեջ, լսում եմ արտույտների զվարթ դայլայլը երկնքի ու երկրի միջև:

– Հենց դրա մասին էլ պատմում էր իմ մեղեդին,– պատասխանում է Սվենը:

Արքայադուստրն այնպիսի հրճվանքի մեջ էր, որ աչքերն արցունքոտվում են:

– Դե՛, իսկ դու ի՞նչ ես կարծում, արքայադուստրը գեղեցի՞կ է,– հարցնում է թագավորը,– գեղեցիկ է չէ՞:

– Ոչինչ, կարծես թե,– պատասխանում է Սվենը,– բայց իմ ճանապարհին ավելի գեղեցիկ աղջիկների եմ տեսել:

Արքայադուստրն այս որ լսում է, զայրացած վեր է թռչում տեղից ու, շուռ տալով բալի արծաթե կողովը, արագ փախչում է դահլիճից, իսկ թագավորը քրքջում է.

– Ես քեզ վերցնում եմ թագավորական ծառայության,– ասում է Սվենին:– Գիշերը դու պահակատեղում ժամապահ կլինես... Իսկ հիմա գնանք ընթրելու, ես այնպե՛ս քաղցած եմ...

Թագավորը հրամայում է Սվենին, որ հետևի իրեն: Բոլորը

մտնում են թագավորական ընդարձակ, ոսկեզարդ սյուներով սեղանատունը: Սվենին նստեցնում են ծառաների հետ՝ վերջին շարքում:

Պալատականներն ու ծառաներն արհամարհանքով նայում են նրա գեղջկական աղքատիկ հագուստին, նրան անվանում «աներես», աշխատում ամեն կերպ ստորացնել նրան, և արագ դատարկում են սկուտեղները, որպեսզի Սվենին ոչինչ չմնա:

– Դե՛, իմ ընթրիքը քեզ դուր եկա՞վ,– հարցնում է Սվենին մոտեցած թագավորը:

– Դա պետք է հարցնեք նրան, ով կերել է,– պատասխանում է Սվենը,– իսկ ինձ բաժին ընկան միայն լպստած ափսեներն ու դատարկ սկահակները:

– Է՛, դա չեղավ, իմ լա՛վ ծառա, ես դա անմիջապես կուղղեմ,– ասում է թագավորը:

Նա Սվենին հրամցնում է լավագույն ուտելիքներ՝ ոսկե սկուտեղով, իր ձեռքով հրաշալի գինին լցնում թանկագին սկահակի մեջ:

Բոլոր պալատականները չարությամբ ու նախանձով են նայում Սվենին, իսկ նա երկու թշերն ուռցնելով խժռում է համեղ ուտելիքը ու կոնծում թանկագին գինին:

Հետո թագավորը Սվենին կարգադրում է ամբողջ գիշերը ժամապահ կանգնել թագավորական ննջարանի դռանը:

– Տե՛ս, հա՛, չքնես,– նախազգուշացնում է նրան թագավորը:– Ով որ պահակության ժամանակ քնի, նա կպատժվի առանց դատի:

Թագավորը կողպում է այգու մեծ դուռը, սեղանին դնում իր ոսկե թագն ու վզի ոսկե շղթան և քաշվում իր ննջարանը: Շուտով այնտեղից լսվում է նրա խռմփոցը:

Սվենը որոշում է չնստել, որպեսզի հանկարծ անսպասելի չքնի: Նա կանգնում է անշարժ, ինչպես արձանը՝ աչքը չթեքելով թագավորի թագից ու ոսկե շղթայից:

Երկինքը հետզհետե ավելի էր մթնում, և արդեն փայլփլում էին աստղերը:

Եվ հանկարծ Սվենն այնպես է ցանկանում քնել, ինչպես ոչ մի անգամ կյանքում: Նրա ոտքերն իրենք իրենց ծալվում են, գլուխը կարծես կապարով էր լցված, իսկ կոպերն ասես ինչ-որ մեկը փակում էր երկաթե ձեռքով: Եվ ինչ-որ գույնզգույն կայծեր են թրթռում նրա աչքերի առջև:

Հանկարծ սեղանի վրայի թագն արքայադուստր է դառնում և ասում նրան.

– Քնի՛ր, իմ սիրելի Սվե՛ն, այն ժամանակ ես քեզ կհամբուրեմ:

Եվ նա գրկում ու համբուրում է Սվենին, որպեսզի նա ավելի խոր քնի:

– Ձե՛ռ քաշիր ինձնից,– փնթփնթում է Սվենը:

Նա ցնցվում է, ուղղվում տեղում, բայց ոչ մի արքայադուստր էլ չկար. աչքին էր երևացել:

– Ես չպե՛տք է քնեմ, ես չպե՛տք է քնեմ,– կրկնում էր նա ինքն իրեն:

Եվ հանկարծ ընկնում է հատակին ու քնում մեռածի պես...

Սվենն արթնանում է այն ժամանակ, երբ արևը հազիվ էր ծագել: Առաջին րոպեին նա չի կարողանում գլխի ընկնել՝ քնե՞լ է ինքը, թե՞ չի քնել:

Սարսափահար նայում է իր շուրջը:

Ամեն ինչ առաջվանն էր. միայն թե սեղանի վրայից չքացել էին և՛ թագը, և՛ թագավորի ոսկե շղթան: Այգու դուռը կրնկի վրա բաց էր:

Սվենը հասկանում է, որ իրեն մահապատիժ է սպասում: Թերևս նա կարող էր փրկվել՝ փախչելով այգու դռնից: Առանց երկար-բարակ մտածելու որոշում է մնալ իր պահակատեղում, որպեսզի ինքն անձամբ ամեն ինչ պատմի թագավորին:

– Բարի լույս,– ասում է թագավորը ներս մտնելով.– հապա մի տուր թագս:

– Թագը չկա,– պատասխանում է Սվենը:

– Ինչպե՞ս թե չկա. ի՞նչ է, կատա՞կ ես անում:

– Ի՞նչ կատակի ժամանակ է, տե՛ր, ես տրամադրություն չունեմ կատակելու:

– Այդ դեպքում տուր ինձ իմ ոսկե շղթան:

– Շղթան էլ չկա,– տխրությամբ պատասխանում է Սվենը:

– Չի՛ կարող պատահել,– բարկությամբ գոռում է թագավորը:

– Ամեն ինչ կարող է պատահել աշխարհում,– պատասխանում է Սվենը,– ես քնել էի ժամապահության ժամանակ:

– Բայց չէ՞ որ դու գիտեիր, որ դրա համար քեզ մահ է սպասում,– ասում է թագավորը,– ինչո՞ւ չփախար:

– Եթե ես փախչեի, ինչպե՞ս կկտրեիք իմ գլուխը,– հարցնում է Սվենը,– իսկ այժմ ես պատրաստ եմ թեկուզ հենց հիմա գնալ մեռնելու:

Այդ նույն պահին ներս է մտնում արքայադուստրը, նա լսում է Սվենի վերջին բառերն ու զայրացած հարցնում հորը.

– Ինչո՞ւ ես ուզում Սվենին մահապատժի ենթարկել:

– Նա այսօր գիշերը քնել է պահակության ժամանակ, և գողերը տարել են իմ թագն ու ոսկե շղթան, դրա համար մենք այսօր կկտրենք նրա գլուխը:

Լսելով այդ՝ արքայադուստրը դառը հեկեկում է, ծնկաչոք ընկնում թագավորի ոտքերն ու սկսում խնդրել նրան:

– Ես հավատացած եմ, որ Սվենը ոչ մի մեղք չունի, նա չէր կարող պահակատեղում քնել, դա մի որևէ չար պալատականի արածը կլինի: Երդվում եմ, որ Սվենը մեղավոր չէ:

– Վերջ տուր, մի՛ երդվիր,– ասում է նրան Սվենը,– դու ոչինչ չգիտես,– դա սուտ երդում կլինի: Չէ՞ որ ես իսկապես քնել էի գիշերը և արժանի եմ մահվան:

Բայց այստեղ թագավորն ասում է.

– Իսկ դու ազնիվ, հիանալի երիտասարդ ես, Սվե՛ն: Ա՛յ, ես որ

այդպիսի նախարարներ ունենայի... Թե չէ նրանք բոլորն էլ սրիկաներ են ու հիմարներ: Հիմա ես համոզվեցի, որ դու իսկապես կարող ես կոչվել Ճշմարտախոս Սվեն: Ախր ես երեկ քեզ ընթրիքին քնաբեր խմիչք տվեցի գավաթով, իսկ երբ դու քնեցիր, վերցրի թագն ու ոսկե շղթան և բաց արեցի այգու դուռը: Բայց դու չփախար, դու ավելի շուտ ցանկացար մնալ քո դիրքում, ինչպես ազնիվ զինվոր և ասել ճշմարտությունը, չնայած դա քեզ մահ էր բերելու:

– Շատ վատ է, որ Դուք ինձ հետ այդպես վարվեցիք, թագավո՛ր, պատասխանում է Սվենը դժգոհությամբ,– դրա համար հարկավոր է Ձեզ մի լավ պատժել:

Թագավորը քրքջում է.

– Ա՛խ, Սվե՛ն, Սվե՛ն, ինչպե՞ս արդյոք կուզեիր ինձ պատժել. գուցե ցանկանում ես կնությա՞ն վերցնել իմ մինուճար աղջկան: Ախր ես տեսնում եմ, որ նա սիրեց քեզ:

– Շնորհակալություն, տե՛ր արքա, չեմ կարող հրաժարվել այդ առաջարկությունից, որովհետև ես ինքս էլ սիրեցի արքայադստերը,– ասում է Սվենը:

– Դու նույնքա՞ն կսիրեիր նրան, եթե լիներ մի հասարակ մուրացիկ,– հարցնում է թագավորը ժպտալով:

– Ի՞նչ իմանաս,– վիզը քորում է Սվենը,– թագավորի աղջկա հետ ամուսնանալը շատ ավելի հաճելի է, քան մուրացիկ կնոջ:

– Ապրե՛ս, Սվե՛ն, դու ամենևին ստել չգիտես, և ես սիրեցի քեզ դրա համար: Դու կլինես իմ ժառանգորդը...

Հաջորդ օրը թագավորն իր ամբողջ թագավորությունով մեկ խնջույք է սարքում: Հարսանիքը շատ հանդիսավոր էր: Ձոր ու գիշեր հնչում էր երաժշտությունը, իսկ թագավորի պալատն ամբողջովին ողողված էր երփներանգ լույսերով: Հարսանիքին հրավիրված էր քառասուն հազար մարդ:

Տոնական սեղանի մոտ արքայադուստրն աչքը չէր կտրում

իր փեսացուից. այնքա՜ն գեղեցիկ էր Սվենը ոսկեկար հագուստի և կարմիր թավշյա թիկնոցի մեջ: Սեղանի գլխավերևում՝ մի պատվավոր տեղից կախված էին Սվենի նետն ու աղեղը, սուրը և ֆլեյտան:

– Ես պետք է քեզ հարսանյաց նվեր տայի, թանկագի՛նս,– ասում է Սվենն իր հարսնացուին:– Բայց ոչինչ չունեմ քեզ նվիրելու՝ այս հին թաթմաններից բացի, որոնք հայրական օրհնանքի հետ միասին հասել են ինձ որպես ժառանգություն: Այս թաթմաններ-ը երևի կախարդական են, եթե նրանք օգնեցին ինձ կնության առնել քեզ: Միայն թե դու ստիպված կլինես կարկատել դրանք, տեսնո՞ւմ ես՝ որքան մաշված են...

Փոքրիկ մկնիկի մեծ ճանապարհորդությունը

Մի անգամ փոքրիկ մկնիկը ուղևորվում է ճանապարհորդության: Տատ-մուկը ճանապարհի համար բլիթներ է թխում և ուղեկցում է նրան մինչև ծակի ելքը:

Մկնիկը դուրս է գալիս վաղ առավոտյան և վերադառնում է իրիկնամուտին:

- Օ՛հ, տատիկ,- ճվճվում է նա:- Բանից պարզվում է, որ ես ամենաուժեղը, ամենաճարպիկը և ամենաքաջն եմ ամբողջ տունդրայում: Իսկ մինչև օրս ես այդ չեմ իմացել:

- Հիմա ինչպե՞ս իմացար,- հարցնում է տատը:

- Ահա թե ինչպես,- սկսում է պատմել մկնիկը:- Դուրս եմ գալիս ծակից, գնում եմ, գնում և հասնում ծովափ: Ծովը մե՜ծ է, շա՛տ մեծ, իսկ ալիքները հա շարժվում են նրա վրա: Իսկ ես բոլորովին էլ չեմ վախենում, ինձ գցում եմ ծովը և լողալով կտրում-անցնում մյուս ափը, նույնիսկ ինքս եմ զարմանում, թե որքան լավ եմ լողում:

- Որտե՞ղ է քո ծովը,- հարցնում է տատը:

- Մեր ծակից դեպի արևելք,- պատասխանում է մկնիկը:

- Գիտեմ, գիտեմ ես, թե այդ ինչ ծով է,- ասում է տատը:- Վերջերս այդ տեղով մի եղջերու է անցել և նրա ոտնատեղում ջուր է հավաքվել:

- Դե լսիր, թե վերջը ինչ եղավ,- ասում է մկնիկը:– Ես արևի տակ չորացա ու գնացի: Տեսնում եմ, դիմացս սար է, բա՛րձր, շա՛տ բարձր: Նրա բարձունքին ծառ կա, որ երկնքին է կպչում: Հո չպիտի՞ շրջանցեմ սարը, մտածում եմ: Վազում եմ ու սկսում թռչել: Եվ սարն անցնում եմ: Նույնիսկ ինքս եմ զարմանում, թե ինչքան բարձր եմ կարողանում թռչել:

- Քո այդ սարն էլ ես գիտեմ,- ասում է տատը: Ջրափոսի կողքին մի հողակույտ կա, որի վրա խոտ է աճել:

Մկնիկը հոգոց է հանում, բայց շարունակում է պատմել.

- Ես գնում եմ առաջ, տեսնում եմ, երկու արջ կռվում են: Մեկը՝ սպիտակ, մյուսը՝ գորշ: Ոռնում են արջերն ու մեկը մյուսի ոսկորներն են ջարդում: Բայց ես չեմ վախենում, ինձ մեջ եմ գցում ու երկուսին էլ շպրտում եմ մի կողմ: Նույնիսկ ինքս ինձ վրա զարմանում եմ, որ մենակ կարողացա երկու արջի հախիցը գալ:

Տատը մտածմունքի մեջ է ընկնում, իսկ հետո ասում.

- Ահա թե ովքեր են եղել քո արջերը՝ սպիտակ ցեցն ու ճանճը:

Այստեղ մկնիկը դառը լաց է լինում:

- Դուրս է գալիս, որ ես ոչ ուժեղ եմ, ոչ ճարպիկ և ոչ էլ քաջ: Լողալով անցել եմ եղջերուի ոտնատեղով, թռել եմ հողակույտի վրայով, շպրտել եմ մի ցեց ու մի ճանճ: Ահա և բոլորը:

Բայց տատը ծիծաղելով ասում է.

- Այսպիսի հիմար, փոքրիկ մկնիկի համար եղջերուի ոտնատեղը ծով կթվա, հողակույտը՝ սար, ցեցն ու ճանճն էլ՝ արջեր: Եթե դու այդ բոլորից հետո չես վախեցել, ուրեմն դու իսկապես ամենաուժեղն ես, ամենաքաջը և ամենաճարպիկը ամբողջ Տունդրայում:

Ով աշխատի՝ նա կուտի

Մի մայր ու որդի են լինում: Նրանց ունեցած-չունեցածը մի զույգ եզ է լինում: Արի ու տես, որ մի օր մայրը ծանր հիվանդանում է: Որդին ձեռուոտ է ընկնում, շուրջը պտտվում.

– Ի՞նչ կուզես, ա՛յ մերա, գուցե մի բան ուտես, ա՛յ մերա:

– Սիրտս միս է ուզում,– ասում է մայրը,– թե եզը կմորթես, նրա միսը կուտեմ, թե չէ՝ ոչինչ էլ չեմ ուտի:

Տղան տարակուսում է.

– Բա վար անելու ժամանակը որ եկավ, ես մի եզով ո՞նց վար անեմ, ա՛յ մերա:

– Սրտանց միս ուտել եմ ուզում,– ասում է մայրը,– վար անելու ժամանակը որ գա, Աստված ողորմած է, մի դուռ կբացի մեզ համար:

Որդին մորը շատ էր սիրում, չի կարողանում խնդրանքը մերժել. եզը մորթում է, միսը կերցնում հիվանդին: Մայրը կամաց-կամաց առողջանում, ոտքի է կանգնում:

Օրեր են՝ գալիս են, անցնում:

Երբ գալիս է վար անելու ժամանակը, խեղճ տղան մնում է անճար, անօգնական. մի եզով ո՞նց վար անի:

– Էդ ի՞նչ է, ա՛յ որդի,– հարցնում է մայրը,– ինչո՞ւ ես նոթերդ կիտել:

– Ա՛յ մերա,– ասում է որդին,– բա հիմա ես ի՞նչ անեմ:

– Դարդ մի՛ արա,– ասում է մայրը,– դու գութա՛ն սարքիր, մի եզան փոխարեն էլ ի՛նձ լծիր:

Ի՞նչ աներ խեղճ տղան. աղքատ մարդու օրը սև լինի, անճարը կուտի բանջարը. լծում է մորը եզան հետ, որ վար անի:

Հենց էդ ժամանակ թագավորը որսից հետ է դառնում: Երբ տեսնում է էդ տեսարանը, շատ է զարմանում ու զայրացած ասում:

– Կանչե՛ք էդ տղին,– ասում է:

Կանչում են:

– Ա՛յ տղա,– ասում է թագավորը,– դու էդ ի՞նչ տեսակ մարդ ես. մորդ դրել ես լծի տակ, որ վար անե՞ս:

– Թագավո՛ր ապրած կենա,– ասում է տղան,– ես երկու եզ ունեի: Մերս որ ծանր հիվանդացավ, ասաց՝ մի եզը մորթի՛ր, սիրտս միս է ուզում: Ես էլ չմերժեցի. մորթեցի, կերավ, Աստծու կամքով լավացավ, ոտքի կանգնեց: Հիմա տեսա, որ առանց վար անելու ձմռանը սոված ենք մնալու, հենց ի՛նքն ասաց՝ ի՛նձ լծիր. ես էլ լծեցի:

– Շա՛տ ապրես, որ մորդ խոսքը գետնով չես տվել,– ասում է թագավորը,– հիմա մորդ արձակի՛ր: Ես մի չլծված ցուլ ունեմ, թե կարողանաս վարժեցնել, կտամ քեզ:

Տղան թագավորի հետ գնում է, տեսնում՝ ի՞նչ. մի կատաղի ցուլ է, որին թագավորն էլ չի կարողանում աշխատեցնել: Մի հնարով ցուլը կապում են:

Տղան ցուլը գոմ է տանում, ամուր կապկպում փորից, եղջյուրներից, երեք օր ու երեք գիշեր սոված-ծարավ պահում: Ցուլը հալից ընկնում է: Տղան նոր միայն բերում է մի թաս ջուր ու մի բուռ խոտ է տալիս, տանում եզան հետ լծում է: Քիչ-քիչ ջուրն էլ է շատացնում, խոտն էլ, ցուլն էլ վարժվում է, եզան հետ կարգին գութան է քաշում:

Լուրը հասնում է թագավորին.

– Բա չե՞ս ասում, թագավո՛րն ապրած կենա, էն քո ազազիլ բուղեն եզան կողքին՝ լծի տակ, իր համար գութան է քաշում:

– Հլա մի էդ տղին կանչե՛ք,– ասում է թագավորը,– թող գա էստեղ:

Կանչում են:

– Ա՛յ տղա,– ասում է թագավորը,– էդ ո՞նց արիր, որ դրա հախից եկար, գործ անել սովորեցրիր:

– Սովորեցրի էլի՛,– ասում է տղան:

– Որ էդպես է – ասում է թագավորը,– ես մի աղջիկ ունեմ, արի տամ քեզ, հարսանիք անենք, տա՛ր քեզ կին: Ի՞նչ կասես սրան:

– Թագավո՛րն ապրած կենա,– ասում է տղան,– ի՞նչ պիտի ասեմ, դու որ տաս, ես էլ կառնեմ, ինչո՛ւ չեմ առնի որ:

Է՛հ, թագավորի աղջկան վայել հարսանիք են անում, գնում են աղջկան բերում տուն: Դու մի ասի՝ էս աղջիկը թույլ, ծույլ մեկն է լինում. նստած տեղից վեր չի կենում:

– Էս ի՞նչ է, ա՛յ որդի, որ բերեցիր մեր գլխին,– ասում է մայրը:

– Բան չկա, ա՛յ մեր,– ասում է որդին,– ես նրան խելքի կբերեմ: Հաց ու ջուր չտա՛ս նրան. բանն ո՞վ անի՝ ես ու դու, հացն ո՞վ ուտի՝ ես ու դու:

Մայր ու որդի ուտում են, աղջկան չեն տալիս: Էդպես անցնում է մի օր, երկու օր, երրորդ օրը ծույլը վեր է կենում, իր շուրջը ավլում, դարձյալ նստում:

Երեկոյան մայրը տղային պատմում է սա, տղան ասում է.

– Դե՛, նրան մի կտոր հա՛ց տուր, մի քիչ էլ ջուր:

Մայրը տալիս է:

Հաջորդ օրը աղջիկը վեր է կենում, սենյակի կեսն ավլում է, նստում իր տեղը:

– Դե՛, որ էդպես է,– ասում է տղան,– բե՛ր, ա՛յ մեր, մի հացի կեսը տուր, ջուրն էլ ավելացրու:

«Վո՛ւյ, գրողը տանի սրանց,– մտածում է աղջիկը,– իմ հոր տանը առանց գործ անելու ամեն ինչ էլ ուտում էի, հիմա սրանց

տանը մինչև գործ չեմ անում, ցամաք հաց էլ չեն տալիս»:

Հաջորդ օրն աղջիկը վեր է կենում, տունն էլ է ավլում, բակն էլ:

– Ա՛յ մերա,– ասում է տղան,– դե՛, հիմա մեզ հետ հավասար հաց կտաս էդ աղջկան:

Էլ ի՞նչ ասեմ: Դրանից հետո աղջիկը խելքի է գալիս: Ամեն օր վեր է կենում, տունն ու բակը մաքրում, ջուր կրում, տան ամեն գործին մասնակցում:

Օրերից մի օր թագավորն ասում է.

– Մեր անբանին տվինք էդ տղին, գնանք տեսնենք՝ ի՞նչ եղավ:

Մի լավ խուրջին է սարքում, գնում տեսության:

Աղջիկը շատ է ուրախանում, արագ-արագ գալիս է, հոր ձիու գլուխը բռնում, հորն օգնում, որ իջնի, տուն տանում:

Սկեսուրը ձին տանում է կապելու: Էդ օրը տանը միս են եփած լինում: Աղջիկը սխտոր է բերում, տալիս հորը, ասում.

– Ա՛յ հեր, կլպի՛ր, որ իրիկունը քեզ հաց տան, թե չէ սրանք քեզ հաց տվողը չեն:

Թագավորը բեղի տակ ծիծաղում է ու դանդաղ մաքրում սխտորը: Սկեսուրը հետ է գալիս, տեսնում, որ թագավորը սխտոր է մաքրում:

– Վո՛ւյ, քոռանամ ես,– ասում է,– աղջի՛, էդ ինչո՞ւ ես սխտորը խնամուն տվել, որ կլպի:

– Բա մինչև գործ չանի, դուք հաց կտա՞ք նրան. ինձ տալի՞ս էիք:

– Ձենդ կտրի՛,– ասում է սկեսուրը,– էդ ի՞նչ ես ասում:

– Խնամի՛, մի՛ նեղանա հարսիցդ,– ասում է թագավորը,– ճիշտ է ասում է՛լի. թե՛ անբան մարդը, թե՛ անասունը մեկ են: Ապրի՛ իմ ղոչաղ փեսան, որ աղջկաս խելքի է բերել: Դե՛, հիմա եկեք իսկական հարսանիքը մե՛կ էլ անենք, թագուհին էլ գա, իր աչքով տեսնի, որ մեր աղջիկն է՛լ էն չէ:

Է՛հ, կրկին հարսանիք են անում, ուրախանում, աշխարհով մեկ լինում:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին…

Հունձ անողները

Մի ամառ մեր Ավանես ապան ու իր տասներկու տարեկան տղան՝ Զախարը, գնում են հունձ անելու: Մի քիչ հնձելուց հետո սովածանում են, նստում են հաց ուտելու. հայրը՝ տղայից շատ ուտող, տղան՝ հորից շատ ուտող:

Տղան, որ տեսնում է՝ հայրը ոնց է մեծ-մեծ կտորներով ուտում, ինքն էլ է սկսում այդպես ուտել: Վերջում, երբ կշտանում են, տղան ասում է.

- Ապա՛, տեսա՞ր ի՞նչ լավ կերանք. էսքան ուտել կլինե՞ր:

Հայրը պատասխանում է.

- Բա դե՛, ես՝ մի մեծ մարդ, հզոր ասլան, դու էլ՝ մի մեծ տղա՝ ասլանի որդի, ուժդ՝ տեղը:

Սկսում են հնձել: Մի քիչ հնձում են, հոգնում, տղան ասում է.

-Ապա՛, հոգնել եմ, արի հանգստանանք:

Նստում են հանգստանալու: Նայում են, տեսնում, որ արտի դեռ շա՛տ փոքր մասն են հնձել:

- Ապա՛, բա ինչո՞ւ ենք էսքան քիչ հնձել:

Հայրն ասում է.

- Ապա՛ն քեզ մատաղ, բա դե՛, ես՝ մի ծեր մարդ, դու՝ մի փոքր երեխա, ո՞նց շատ հնձեինք:

Չար կախարդը

Մի մարդ ամուսնանում է մի շատ գեղեցիկ կնոջ հետ, և նրանցից երջանիկը չի լինում աշխարհում: Բայց չար կախարդը նրան նախանձում է: Նա ընդունում է այդ մարդու կերպարանքը և նրանք այնքան են նմանվում իրար, ինչպես միջից կիսած խնձորը: Նա գալիս է գյուղ և երիտասարդ ամուսնուն ասում.

- Հեռացիր: Դա իմ կինն է:

Զայրացած ամուսինը հարձակվում է կախարդի վրա: Նրանք սկսում են կոխ բռնել և թավալվել գետնի վրա: Աղմուկը հասնում է կնոջ հորը: Սա դանակը ձեռքին վազում է, որպեսզի իր փեսային պաշտպանի, բայց անգամ նա չի կարողանում ջոկել, թե ո՞րն է իր փեսան, այնքան նրանք իրար նման են լինում: Իսկ ամենավատը երիտասարդ կնոջ վիճակն է լինում, նա չի իմանում, թե որ մեկին լսի, ում շորերը լվանա և ում համար ուտելիք պատրաստի: Երկուսն էլ գոռում են նրա վրա և ամեն մեկը հրամայում է իրենը: Նա նստում է խրճիթի մի անկյունում ու դառը արցունքներ թափում: Վերջապես տղամարդիկ այնպես են իրար կպչում և իրար մազ

քաշում, որ նրանց ոչ մի կերպ չեն կարողանում բաժանել: Այդպես էլ տանում են դատարան, գյուղի մեծամեծի մոտ:

Այդ ժամանակ ամուսինն ասում է.

- Ժողովուրդ, վերջերս ես ամուսնացա: Բայց մի անծանոթ մարդ եկավ և հրամայեց ինձ իմ տնից գնալ, թե «Դա իմ կինն է»: Պաշտպանեցեք ինձ:

Բայց նույն բանն է ասում և կախարդը, և մարդիկ չեն իմանում, թե այդ երկուսից որ մեկին հավատան:

Այդ ժամանակ ամուսինը ուզում է երդվել արևի անունով, որ հենց ինքն է իսկական ամուսինը: Կախարդը նրան ընդհատում է.

- Երդվիր թեկուզ հարյուր անգամ, դրանից իմ կինը երբեք չի դառնա քոնը:

Գյուղապետը երկար մտածում է, բայց չի կարողանում վճռել դատը: Այդ ժամանակ մարդիկ վիճողներին տանում են կղզու գլխավոր առաջնորդի մոտ: Այս առաջնորդը առաջինից խորամանկն է լինում: Նա վիճողներին լսում է և հրամայում, որ նրանցից ամեն մեկը յոթը անգամ ծանր արկղը բարձրացնի սարը: Բայց արկղում մարդ է պահված լինում, և այդ մասին ոչ ոք չի իմանում:

Առաջինը արկղը բարձրացնում է իսկական ամուսինը: Սարը զառիթափ է լինում: Ամուսինը ծանր արկղը տանում է և ամբողջ ճանապարհին հառաչում.

- Վա՛յ ինձ: Ինչե՞ր պիտի քաշեմ իմ կնոջ համար: Բայց ես կհամբերեմ, միայն թե վերադարձնեմ նրան:

Երկրորդ անգամ արկղը տանում է կախարդը; Նա բարձրացնում է ծանր բեռը և ամբողջ ճանապարհին ախ քաշում.

- Վա՛յ ինձ: Ինչ պիտի քաշեմ ես այս կնոջ երեսից: Բայց էլի կհամբերեմ, միայն թե նա իմը լինի:

Արկղում նստած մարդը լսում է այդ խոսքերը և հասկանում, թե ով է երկուսից իսկական ամուսինը: Նա այդ մասին հայտնում է առաջնորդին: Այդ ժամանակ առաջնորդը հրամայում է բամբուկի

մի շատ երկար ցողուն բերել և մեջը դատարկել: Ապա ասում է.

- Ձեզնից ով կարողանա անցնել այս ցողունի միջով, նա կլինի իսկական ամուսինը:

Ամուսինը մոտենում է ցողունին, բայց որքան աշխատում է, չի կարողանում անցնել: Բայց դե այն. ինչ չի կարող անել մարդը, կարող է անել կախարդը: Երբ հերթը հասնում է նրան, նա սեղմվում է, բարակում, դառնում իսկական օձ և մտնում է բամբուկի ցողունի մեջ: Խորամանկ առաջնորդը տեսնում է, թե ով է նրանցից խաբեբան: Երբ կախարդը հասնում է փայտի մեջտեղը, նա հրամայում է ցողունի երկու ծայրերը փակել: Այսպիսով չար կախարդը բռնվում է, իսկ իսկական ամուսինը հետ է ստանում իր կնոջը:

Աղվեսն ու հավի միսը

Մի անգամ աղվեսը գյուղացուց մի հավ փախցրեց, բերեց իր բույնը, փետրահան արեց, բայց չուզեց անմիջապես ուտել: «Արդեն իրիկուն է,- մտածեց աղվեսը,- ինքս էլ խիստ հոգնած եմ, ավելի լավ է վաղը իսկական խնջույք սարքեմ: Իսկ հիմա լավ քնեմ»: Նա հավը բարձի փոխարեն դրեց գլխի տակ ու պառկեց:

Շատ շուռումուռ եկավ կողքից կողք, բայց քնել չկարողացավ: Այդ ժամանակ վեր կացավ, շոշափեց հավն ու ասաց.

- Այս բարձը շատ է փափուկ, ոչ մի կերպ քնել չես կարող: Լավ է ուտեմ ամենաչաղ տեղերը, այն ժամանակ էլ այսպես փափուկ չի լինի:

Այդպես էլ արեց. կերավ կողքերի համարյա ամբողջ միսը ու մի քիչ էլ մեջքից ու նորից պառկեց: Բայց այս անգամ էլ չհաջողվեց քնել: Նրան թվաց, թե բարձը շատ է կոշտ: Այդ ժամանակ աղվեսը դարձյալ վեր կացավ և ասաց.

- Հիմա ես կուղղեմ իմ սխալը: Չաղ տեղերը կուտեմ ավելի քիչ, նիհար մասերն ավելի շատ:

Նա կերավ ամբողջ միսը, որ մնացել էր կողքերի ու մեջքի վրա, և նորից փակեց աչքերը:

Բայց այս անգամ էլ քուն չեկավ աչքերին: Այդ ժամանակ աղվեսը մտածեց. «Չէ՞ որ առաջ ես բարձ չեմ էլ ունեցել, բայց միշտ էլ մեռածի պես քնել եմ մինչև արևածագ»:

Այսպես մտածելով՝ վեր կացավ, կերավ հավի թևերն ու ոտքերը և կշտացած պառկեց ուղղակի հավի ոսկորների վրա: Եվ իսկույն քունը տարավ ու քնեց մինչև առավոտ: Եվ միայն առավոտյան գլխի ընկավ, որ ոչ թե բարձն էր խանգարում իրեն քնելու, այլ՝ հավի միսը:

Գիտնականն ու բժիշկը

Պոլսում մի գիտնական ու մի բժիշկ են լինում: Նրանք տեսնում են, որ իրենց քաղաքում բժիշկ ու գիտնական շատ կան, էնքան շատ, որ ուր գնում ես, ոտքդ բժշկի ու գիտնականի է առնում: Մի օր էս բժիշկն ասում է.

– Գիտնակա՛ն ախպեր, էստեղ բժիշկ ու գիտնական շատ կան, մեր կարիքն էստեղ չի լինելու: Արի գնանք էնպիսի մի տեղ, որտեղ ո՛չ բժիշկ լինի, ո՛չ գիտնական. կարող է՝ փող վաստակենք:

Խոսքները մեկ են անում ու ճանապարհ ընկնում: Շատ են գնում թե քիչ՝ մի գյուղում մի տանը նրանց հյուր են ընդունում: Օրը կիրակի է լինում: Կիրակի օրերը գյուղացիները յուղով մի բան եփելու սովորություն են ունենում: Տանը, ուր նրանք հյուրընկալվել էին, էդ օրը փլավ էին եփել: Երբ թոնրի կրակն իջնում է, փլավը լցնում են մեծ պղնձե սկուտեղի մեջ, յուղն էլ լցնում վրան ու դնում տան տղամարդու առաջ:

Մարդը մի սկուտեղ փլավն ուտում, դնում է մի կողմ, նստում:

Բժիշկն ասում է.

– Գիտնակա՛ն ախպեր, էսօր իմ գործը հաջող է լինելու. կարգին փող եմ վաստակելու:

– Ինչո՞ւ, որտեղի՞ց ես վաստակելու,– հարցնում է գիտնականը:

– Դու տեսա՞ր, որ էդ մարդը մեծ պղնձե ամանով փլավը կերավ:

– Տեսա:

– Հիմա էդ բլղուրը դրա փորի մեջ ուռելու է, ու բժշկի կարիք է լինելու: Էդ ժամանակ վեր կկենամ, կասեմ՝ ես բժիշկ եմ: Կառողջացնեմ նրան, շատ փող կստանամ:

Բժիշկն սկսում է սպասել, թե էդ մարդը երբ պիտի փքվի: Տեսնում է, որ նա վեր կացավ, զամբյուղը դրեց գլխի տակ, մեջքն արեց թոնրի կողմը, գլուխը դրեց զամբյուղին ու քնեց:

Բժիշկը սպասում է, թե մարդն ուր որ է կփքվի, բժիշկ կկանչի: Տեսնում է՝ մարդը երեք ժամ քնեց, քրտնեց, վեր կացավ նստեց, ճմլկոտաց, ու նրան ոչինչ էլ չեղավ:

Բժիշկը զարմանում է, թե ինչպե՞ս եղավ, որ նրան ոչինչ չպատահեց. մտածո՞ւմ, մտածո՞ւմ է, խելքը բան չի կտրում:

Երեկո է դառնում: Տանտերը գալիս է, հյուրերի համար անկողին բերում, որ պառկեն վրան: Գիտնականն ասում է.

– Ախպե՛ր, մենք էստեղ չենք կարող քնել, մեր անկողինը դրսո՛ւմ գցիր:

Մարդն ասում է.

– Դրսում մի՛ պառկեք. գիշերն անձրև կգա, կթրջվեք:

Գիտնականը նայում է երկնքին, դեսուդեն է նայում, տեսնում է, որ ամպի կտոր անգամ չի երևում:

– Ախպե՛ր,– ասում է նա տանտիրոջը,– ես երկինք ու գետին քննեցի. ամպի, անձրևի հետք չի երևում: Մեր անկողինը դրսում փռի՛ր. թող անձրև գա, մենք էլ թրջվե՛նք:

– Ախպե՛ր, կփռեմ, կպառկեք, ես բան չեմ ասում, բայց որ գիշերն անձրև գա, դուռը չեմ բացելու ձեզ համար,– ասում է տանտերը:

– Հա՛, ախպե՛ր, երբ անձրև գա, դուռը մի՛ բաց մեզ համար,– ասում է գիտնականը:

Երեկոյան գիտնականն ու բժիշկը երեք-չորս ժամ զրուցելով ժամանակ են անցկացնում: Բժիշկը գլուխը բարձրացնում, տեսնում է՝ ամպ երևաց: Գիտնականն ասում է.

– Պառկիր, քնի՛ր, անձրև չի գա, մի՛ մտածիր:

Պառկում, երեք-չորս ժամ քնում են, գիտնականն արթնանում, տեսնում է, որ երկնքում մի թանձր ամպ է հայտնվել: Ինքն իրեն մտմտում է, թե անձրև պիտի գա, տանտիրոջ ասածն էլ պիտի լինի: Մտմտուքի մեջ է լինում, երբ անձրևը կաթկթում է, քանի գնում ուժեղանում է: Գիտնականն արթնացնում է բժշկին.

– Բժի՛շկ, բժի՛շկ, վե՛ր կաց, գնանք ներս, անձրև է գալիս, թրջվեցինք:

Բժիշկն արթնանում, տեսնում է, որ իսկապես ուժեղ անձրև է գալիս և ասում է գիտնականին.

– Աստված քո տո՛ւնն ավերի, դու ասում էիր՝ անձրև չի գա:

– Արի՛ գնանք, դուռը բացել տանք, ներս մտնենք, նոր կխոսենք:

Երկուսով գալիս, կանգնում են դռան առաջ, դուռը ծեծում են, կանչում տանտիրոջը: Տանտերը գալիս, ասում է.

– Դուռը չեմ բացելու. ես իրիկունը ձեզ ասացի, ինձ չլսեցիք:

Երկուսով շատ աղաչանք-պաղատանք են անում, տանտիրոջ ճարը կտրվում է, դուռը բացում է: Գիտնականն ու բժիշկն իրենց անկողինը ներս են տանում, փռում են, նստում վրան ու կանչում են տանտիրոջը.

– Դու էլ արի՛, նստի՛ր էստեղ, մի քիչ զրուցենք:

Տանտերը գալիս, նստում է: Բժիշկն ասում է.

– Ախպե՛ր, ես քեզ մի բան հարցնեմ, դու ճի՛շտն ասա:

– Հարցրո՛ւ՝ տեսնենք:

– Երեկ կեսօրին մի մեծ ման փլավ լցրին, դրեցին քո առաջ, յուղն էլ լցրին վրան. դու էդքան փլավը կերար, ելար, զամբյուղը դրիր գլխիդ տակ, թիկունքդ թոնրին արեցիր, երեք-չորս ժամ քնեցիր ու հանգիստ ելար նստեցիր: Ես էլ մտածեցի. «Էս որ էդ

փլավը կերավ, փորը պիտի փքվի, բժիշկ կանչի»: Ես էլ բժիշկ եմ, կգամ քեզ կլավացնեմ: Տեսա՝ քեզ ոչինչ էլ չեղավ: Էդ՝ մեկ: Մեկ էլ, էս իմ կողքի մարդը գիտնական է. երկինք-գետին է քննում: Իրիկունն ասաց՝ անկարելի է, անձրև չի գա: Ու ես էլ տեսա՝ պարզ էր, ու երկնքում ամպ չէր երևում: Կեսգիշեր եղավ թե չէ, անձրևը միանգամից եկավ մեզ վրա: Հիմա, Աստված սիրես, պիտի ճիշտը մեզ ասես:

– Ախպեր,– ասում է տանտերը,– ինչը ճիշտն ասեմ: Ես որ մեր սարն էի գնում կոճղեր բերելու, մի քանի անգամ տեսել եմ. էդ սարում մի արջ կար, գնում էր լեշերի կողմը, ինչքան լեշ կար, ուտում էր, փորը փքվում էր, դառնում ոնց որ մի դհոլ, ու ինքը գալիս, արևկող մի տեղում պառկում էր, փորն էլ դեմ անում արևին: Մարսում էր կերածն ու գնում. ես էդ բանը նրանից սովորեցի:

– Իսկ եղանակ գուշակելը որտեղից սովորեցիր. էդ էլ ասա:

– Մենք ուղիղ պոզերով մի եզ ունենք: Էն օրը, որ անձրև պիտի գա, լուսնումութին ինչ անում ենք, չենք անում, դուրս չի գալիս. մնում է գոմում: Որ օրը որ անձրև չի գալու, ինչ անեմ-չանեմ, ներս չի մտնում:

Բժիշկը գիտնականին ասում է.

– Ախպեր, էն երկրի բժիշկը որ արջը լինի, գիտնականն էլ՝ եզը, էդտեղ մեր կարիքը չի լինի. վեր կաց էստեղից փախչենք:

Ու վեր են կենում, էդտեղից փախչում:

Իմաստուն բուն

Լինում է չի լինում՝ ոչ այն է թագավորազն կամ թագավոր, ոչ այն է իմաստուն կամ կախարդ, ոչ այն է կալվածատեր կամ ազնվական, ոչ այն է զգույշ քաղաքագետ կամ մինիստր, ոչ այն է զինվորական կամ գոռոզ աստիճանավոր, ոչ այն է հարուստ վաճառական կամ քաղցրաձայն երգիչ, ոչ այն է բժիշկ կամ հեքիմ, մի խոսքով ոչ այս, ոչ այն, այլ մի հասարակ գյուղացի՝ Բուրաչոկ անունով: Եվ նա ունենում է ոչ թե թագավորական կամ ազնվականական, ոչ թե պանական խելք, այլ, ինչպես ասում են, ամենահիսկական գյուղացու խելք:

Ինչպես է լինում, Բուրաչուկը քաղաք է գնում, մտնում է շուկա և այնտեղ մի քանի կոպեկով գնում է չռված աչքերով մի բու՝ տղային նվեր տանելու համար:

Բուի հետ վերադառնում է նա իր գյուղը: Երեկոյան Բուրաչուկը հոգնում է և սկսում մտածել գիշերելու մասին: Տեսնում է մոտակայքում մի խրճիթում լույս է վառվում: «Արի մտնեմ էդտեղ,- մտածում է նա,- մի-գուցե բարի մարդիկ են, տեղ կտան քնելու»: Մոտենում է պատուհանին և նայում ներս՝ ի՞նչ տեսնի. սպիտակ

սփռոցով ծածկած սեղանի վրա դրված է մի հրաշալի թխվածք, իսկ նրա կողքին՝ տապակած սագ և մի շիշ գինի, աթոռին նստած է գիրուկ նորահարսը, ձեռնոց է գործում և ամուսնուն սպասում:

- Ինչ ասել կուզի, լավ ընթրիք է,- մտածում է Բուրաչուկը և թակում լուսամուտը:

- Ո՞վ է, այդ դռ՛ու ես, Մետեկ:

- Թույլ տուր, գեղեցկուհի, քիչ տաքանալ անցորդիս:

Տանտիրուհին իրար է անցնում, սկսում է վազվզել խրճիթում: Մի վայրկյանում թխվածքը սեղանի վրայից մտնում է հացի տաշտը, շշով գինին՝ սնդուկի մեջ, իսկ տապակած սագը՝ վառարանը:

- Հը՛մ, երևում է՝ ժլատն է... Էսպիսի տանտիրուհուց չոր հաց էլ չես ստանա,- վրդովմունքով մտածում է Բուրաչուկը և այն է ուզում է հեռանալ պատուհանից, մեկ էլ անսպասելիորեն ձյան վրա ճռճռալով մոտենում է մի սահնակ և գալիս ուղիղ դեպի խրճիթը: Սահնակից դուրս է գալիս մի բարձրահասակ, թիկնեղ գյուղացի՝ տաք քուրքի մեջ փաթաթված: Նա մոտենում է դռանը և ինչքան ուժ ունի ծեծում դարպասն ու գոչում.

- Կնի՛կ, դուռը բաց:

Դարպասը անմիջապես բացվում է, տանտիկինը ձին ներս է տանում, իսկ տանտերը տեսնելով Բուրաչուկին, ասում է.

- Իսկ դու, եղբայրս, ո՞վ ես:

- Ես անցվոր եմ, թույլ տուր քեզ մոտ գիշերեմ,- պատասխանում է Բուրաչուկը:

- Դե, ինչ կա որ, մտիր, մենք միշտ ուրախությամբ ենք հյուր ընդունում,- ասում է հյուրասեր տանտերը և դիմելով կնոջը՝ ավելացնում.

- Իսկ դու, կնի՛կ, սեղանը գցիր:

- Հապա ի՞նչ դնեմ սեղանին,- հառաչելով պատասխանում է կինը ծուռ-ծուռ նայելով Բուրաչուկին, ոչինչ չկա տանը, բացի հացից և աղից: Ես քեզ էդպես շուտ չէի սպասում, Մետիկ, և ոչինչ էլ չեմ պատրաստել: Հյուրասիրելու էլ ոչինչ չունեմ:

- Դե, չկա՝ չկա,- հանգիստ պատասխանում է տանտերը, ի՞նչ

անենք հաց, աղ և ջուր՝ այդ էլ ուտելիք է: Հանիր, ինչ որ ունես, միայն թե ուտելու բան բեր:

Եվ մինչև տանտիրուհին սեղանը կգցեր, տանտերը նկատելով Բուրաչուկի ծնկներին նստած բուին՝ հարցնում է.

- Ասա ինձ, ախպերս, դա ի՞նչ բան է:

- Սա բու է, իմաստուն բու, խելոք, հասկացող թռչուն է, ամեն ինչ տեսնում է և ստախոսներին ատում:

- Ահա թե ինչ, խորամանկ թռչուն է ուրեմն,- գովում է տանտերը բուին և սկսում ախորժակով ուտել աղով հացը:

Այդ ընթացքում Բուրաչուկը կսմթում է բուին, և նա իր ձևով պատասխանում է:

- Այդ ի՞նչ է ասում,- հետաքրքրվում է տանտերը:

- Ասում է, թե հացի տաշտում թխվածք կա:

- Թխվա՞ծք, մի նայիր, այ կնիկ:

- Որտեղի՞ց էնտեղ թխվածք պիտի լինի,- պատասխանում է ագահ տանտիկինը և վախով նայում իմաստուն թռչունին, կարող է պատահել՝ մի ինչ-որ չոր կտոր մնացած լինի, հիմա կնայեմ,- նա նայում է հացի տաշտի մեջ և ձեռքերը զարկում իրար, իբր թե զարմանում է և հանում է տաշտից կարմրաթուշ թխվածքը:

Տանտերը և հյուրը իրար են նայում և ոչ մի խոսք չասելով՝ լուռ ու մունջ սկսում են արագորեն խժռել թխվածքը:

Բուրաչուկը առանց երկար մտածելու նորից է կսմթում բուին և նա նորից է կանչում:

- Հիմա՞ ինչ է ասում,- հետաքրքրությամբ հարցնում է տանտերը:

- Դե, նա իրենն է ասում,- իբր թե քաշվելով պատասխանում է Բուրաչուկը,- ասում է, թե սնդուկի մեջ մի շիշ գինի կա:

- Դե, ինչ կա որ, լավ բան է ասում,- ձեռքերը իրար շփելով գոչում է տանտերը:- Ապա, կնիկ, մի ստուգիր:

- Ա՛յ, ճիշտն ասած, չգիտեմ: Բայց որտեղի՞ց պիտի լինի, գուցե մի կաթիլ մնացած լինի: Հիմա կնայեմ:

Եվ սեղանի վրա երևում է մի ամբողջ շիշ գինի: Տանտերը և հյուրը դարձյալ իրար երես են նայում, խորամանկորեն քմծիծաղ

տալիս, լուռ մի-մի թաս խմում են և սկսում ախորժակով ուտել թխվածքը:

- Վերջապես լռելո՞ւ ես, թե՞ չէ, անպիտա՛ն, կամաց բարկանում է բուի վրա Բուրաչուկը, որը նոր կսմտոց ստանալով երրորդ անգամ է կոնչում.

- Լռիր, քո գործը չի:

Բայց հետաքրքրասեր տանտերը իսկույն ընդհատում է Բուրաչուկի զրույցը ամենագետ բուի հետ:

- Ոչ, ոչ, եղբայր, դու պիտի անպայման ասես, թե ինչ հայտնեց քեզ քո իմաստուն բուն:

- Դե, հիմար բան է ասում,- իբր թե չուզենալով պատասխանում է Բուրաչուկը,- ասում է, թե վառարանում տապակած սագ կա:

- Սա՛գ, լսո՞ւմ ես, կնիկ. սա՛գ, այն էլ տակապած: Հապա մի էստեղ բեր դրան և մի անգամ էլ նայիր, տես, հո ուրիշ բան էլ չկա՞:

Տանտիկինը նետվում է վառարանի կողմը, նայում փռան մեջ և զարմանքից իրար խփում ձեռքերը:

- Կա, իհարկե: Ախ, Աստված իմ, սա ինչպե՞ս պատահեց. Մի քիչ առաջ ոչինչ չկար, իսկ հիմա հայտնի չէ, թե որտեղից լույս ընկավ էս տապակած սագը: Ուղղակի խելքս չի հասնում – հրա՛շք է, հրա՛շք:

Բարեսիրտ տանտերը ծիծաղում է, աչքով անում Բուրաչուկին, առաջարկում է մեկ անգամ էլ խմել իմաստուն բուի՝ խելոք, հասկացող թռչունի կենացը, որը ամեն ինչ գիտե և ատում է ստախոսներին:

Երբ մյուս առավոտյան Բուրաչուկը կուշտ նախաճաշում է ընթրիքի մնացորդներով, մնաս բորով անում հյուրասեր տանտերերին, գյուղացին աչքով է անում կնոջը և ուրախ ծիծաղում:

- Թե դու աղվես ես, Կասյկա, նա էլ քո պոչն է... Այ թե լավ դաս տվեց քեզ քո ժլատության համար: Երևում է, որ հիմար մարդ չէ այդ գյուղացին:

Տերն ու խոհարարը

Ապրում էր աշխարհում մի տանուտեր: Սովորական մի տանուտեր, ուրիշ տանուտերերից ոչ պակաս, ոչ էլ ավել:

Մի անգամ նա պատրաստվում է իր նոր կառքով գնալ զբոսանքի: Հենց դուրս գալուց առաջ կանչում է խոհարարին և հրամայում ճաշի համար սագ տապակել:

- Միայն տես, հա՛, հանկարծ սատանան քեզ չմոլորեցնի և էդ սագից թեկուզ մի կտոր չուտես: Թե չէ գիտե՞ս գլխիդ ինչ օյին կբերեմ: Կհրամայեմ քեզ կապել, ինչպես խոտով լիքը տոպրակը, և էնքան ծեծել, մինչև գորտի պես հողին կպչես: Հասկացա՞ր:

- Հասկացա, աղա:

- Այդպես՝ ասածս ականջիդ օղ արա, կախի: Եվ սագը պիտի պատրաստ լինի ճիշտ իմ վերադարձի պահին և ոչ այրված լինի, ոչ էլ չոր, ոչ տաք, ոչ էլ սառը, այլ այնպիսին, որ բերանդ դնես՝ հոգիդ փառավորվի: Հասկացա՞ր:

- Հասկացա, աղա:

Տերը գնում է, իսկ խոհարարը սկսում է զբաղվել սագով: Նա այնպես է տապակում սագը, որ աղան ոչ մի բան չկարողանա

ասել: Սագը բոլոր կողմերից կարմրացնում է, այնպես, որ նրա կաշին դառնա ոսկեգույն, և, երբ նայես, բերանիդ ջուրը գնա:

Խոհարարը չի կարողանում իրեն զսպել, երևում է, սատանան նրան բոթում է ներսից, կտրում է սագի մի ոտքը և ուտում:

Իսկ տերը զբոսանքից վերադառնում է ու հրամայում ճաշը մատուցել:

Եվ սագը խժռելիս հանկարծ տեսնում է, որ նրա երկրորդ ոտքը չկա:

Բարկությունից քիչ է մնում պայթի աղան:

- Ախ, ահա թե դու ինչպիսի՛ն ես,- բղավում է նա խոհարարի վրա:- Լավ, ես քեզ էն օրը գցեմ, որ հորդ հարսանիքը հիշես: Չէ՞ որ ես քեզ արգելեցի սագից ուտել:

- Արգելեցիր, ճիշտ է, աղա:

- Իսկ ինչպե՞ս համարձակվեցիր ուտել ամբողջ մի ոտք:

- Ես չեմ կերել, աղա:

- Ո՞նց թե չես կերել: Բա որտե՞ղ է սագի երկրորդ ոտքը,- գոռում է տերը: Ով որ երկրորդ ոտքը կերել է, թող որդերի բաժին դառնա...

- Դե ի՞նչ ես ասում, աղա, այս սագը չէ՞ որ մի ոտանի է եղել:

Տերը բարկությունից ուղղակի պայթում է,

- Դու էդ ի՞նչ ես գլուխս տանում, որտե՞ղ է տեսնված, որ սագը մի ոտանի լինի:

- Դե արի գնանք լիճ, ինքդ կտեսնես:

- Գնանք,- ասում է աղան,- բայց եթե դու սուտ դուրս եկար, հո գիտե՞ս թե ինչ եմ անելու քեզ: Դե ես... Դե ես ինքս էլ չգիտեմ, թե ինչ կանեմ քեզ:

Նրանք գնում են այն լիճը, որտեղ սագերն են հավաքվում:

Շոգ օր է, արևն ուղղակի վառում է: Սագերը մտել են ջուրը, մի ոտի վրա կանգնել, մյուսը փորի տակ պահած փետուրներն են հարդարում:

- Հը, ի՞նչ կասես, աղա, հիմա ո՞վ է մեզանից ճիշտը,- հարցնում է խոհարարը:- Տեսնո՞ւմ ես, որ սագերը մի ոտանի են:

- Ախ, դու, խաբեբա,- գոռում է տերը, ձեռքը թափահարում և այնպես է ֆշշացնում, ֆշշ... քշշ...

Սագերը վախից շրջմփ կանգնում են երկու ոտքի վրա և փախչում են ափով, ամեն մեկը մի կողմի վրա:

- Դե, հիմա ո՞վ է ճիշտը,- հարցնում է տերը: Սագերը քանի՞ ոտք ունեն:

Իսկ խոհարարը պատասխանում է,

- Այդպես պետք էր նաև տապակած սագի վրա գոռալ, աղա: Քշշ... և նա էլ վախից կհաներ երկրորդ ոտքը:

Աղայի աչքերը զարմանքից չռվում են: Կանգնում է, ասես սագի ոտքը բկին է մնացել, խոսք ասել չի կարողանում:

Եվ նա խոհարարին մինչև հիմա էլ իր սեղանից ամեն բան տալիս է ուտելու:

Բովանդակություն

Ադոն ու Բդոն 3
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Գիտե՞մ, գիտե՞մ 10
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Ճարտասանության հեղեղը 13
(ուզբեկական հեքիաթ)
Հաստ ու բարակ մի գին են 17
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Ագահ տիրուհին 21
(ճապոնական հեքիաթ)
Խելքից խեղճը 23
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Վինսենթ աժդահան 24
(ֆրանսիական հեքիաթ)
Երազը 31
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Մարդն ու կինը 33
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Ապենդին և ջիգիթները 37
(կիրգիզական հեքիաթ)

Ինչու է եղջերու-Ամբեկոն լեռներում ապրում **39**
(Լատինական Ամերիկայի բնիկների հեքիաթ)
Ճշմարտախոս Սվենը **42**
(դանիական հեքիաթ, թարգմ.՝ Թ. Ահարոնյան)
Փոքրիկ մկնիկի մեծ ճանապարհորդությունը **53**
(Ալյասկայի էսկիմոսների հեքիաթ)
Ով աշխատի՝ նա կուտի **55**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Հունձ անողները **60**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Չար կախարդը **61**
(մալայական հեքիաթ)
Աղվեսն ու հավի միսը **64**
(չինական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Է. Ավագյան)
Գիտնականն ու բժիշկը **66**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Իմաստուն բուն **71**
(լեհական հեքիաթ)
Տերն ու խոհարարը **75**
(մոլդովական հեքիաթ)

Կազմող՝
Նազելի Կարապետյան

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

Նկարազարդումը՝
Լուիզա Գալստյանի

Համակարգչային ձևավորումը՝
Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House